ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՏԴ 34(091)
DOI: 10.56246/18294480-2025.18-32

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Գավառի պետական համալսարանի պրոֆեսոր,
էլփոստ՝ khachatryan08@mail.ru

Կարելի է ապացուցված համարել, որ համաներման համընդհանրական, կրոնաիրավական, քաղաքական և քաղաքակրթական նշանակություն, բովանդակություն և իմաստ ունեցող առաջին հրամանագիրը հրապարակվել է 299-301թթ.՝ առաքյալներին նվիրված տոնի օրը, հայոց Տրդատ Երրորդ Մեծ Արշակունի թագավորի կողմից Գրիգոր Լուսավորչի խորհրդով՝ ի նշանավորումն քրիստոնեական առաջին պետության և իրավական սիստեմի հիմնադրման: Դրա ուժով զանգվածային կերպով ազատվել են քրեական պատասխանատվության ենթակա բոլոր պարտապանները և հանցապարտները, իսկ ազատազրկման մեջ գտնվող, առանձնապես ծանր հանցանքներ գործած անձինք, որոնք պահվել են բանտերում, ազատվել են շղթաներից: Քրիստոնեական եկեղեցին և վանականները ազատվել են հարկեր վճարելուց, ինչպես նաև ամուսնանալու և որդեծնման պարտականություններից: Հայտարարվել է նաև համընդհանուր հարկային ամնիստիա:

Հռոմեական իմպերատոր Կոնստանտին Մեծը, ընդօրինակելով հայոց թագավորին, իր իշխանության գալու 20-ամյակին նվիրված տոնակատարության ժամանակ նույնպես հրապարակել է համաներման ակտ, որով քրիստոնեական եկեղեցին և եկեղեցականները, այդ թվում՝ վանական կույսերը, ազատվել են ինչպես հարկեր վճարելուց, այնպես էլ ամուսնանալու և որդեծնման պարտականությունից: Իսկ հռոմեական իմպերիայի հայ բնակիչներն ազատվել են գլխահարկից:

Զրադաշտական իրականության մեջ ևս հրապարակվել են համաներման ընդհանրական բնույթի բացառիկ ակտեր, որոնցից է պարսիկ թագավոր Վաղարշ Առաջինի կողմից 485թ. հրատարակածը: Դրանով համաներում է հայտարարվել և մոռացության են տրվել հայ նախարարների, զորքի և ամբողջ ազգաբնակչության կողմից 481-484թթ. ապստամբության ժամանակ կատարած արարքները: Դրանք ճանաչվել են ոչ հանցավոր, անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում

կատարված: Հարկերը թեթևացվել են, իսկ Եկեղեցին և վանքերն ընդհանրապես ազատվել են հարկերից:

Զրադաշտական համաներման համընդհանրական ևս մեկ ակտ ընդունվել է պարսիկ թագավոր Կավադ Շիրոյեի կողմից 628թ., որն ուներ իրավաքաղաքական և տնտեսական բնույթ և նշանակություն: Դրանով բանտերից ազատվել են անհատապես չորոշված անձինք, ինչպես նաև երեք տարով հարկերից ու տուրքերից ազատվել պետության բոլոր տնտեսվարողները: Հիմնավորվել է, որ բոլոր այդ համընդհանրական համաներման ակտերը ընդունվել են հայկական քրիստոնեական առաջին համաներման ակտի օրինակով:

Այսպիսով, հեղինակի կողմից ապացուցվել է, որ ոչ քրիստոնեական պետություններում ընդունված վերոնշված բոլոր համաներման ակտերը՝ ունեցող համընդհարական, համազգային և քաղաքակրթական բնույթ, ընդունվել են համաներման առաջին հրամանագրի հիման վրա՝ ընդունված Տրդատ Երրորդ Մեծի կողմից:

Բանալի բառեր՝ *համաներման ակտ, համընդհանրական ամնիստիայի ակտ, 30 տիրաններ, Տրդատ Երրորդ Մեծ, Գրիգոր Լուսավորիչ, Կոնստանտին Մեծ, Վահան Մամիկոնյան, Վաղարշ Առաջին, Նիխոր, Նվարսակ, Խոսրով Կավադ Փարվեզ Երկրորդ, Կավադ Շիրոյե:*

Համաներումը (ամնիստիա, հանցագործության մոռացում, մեղքերի արձակում, թողություն) պետական իշխանության մարմնի որոշմամբ հանցագործություն կատարած, նախապես և անհատապես չորոշված շրջանակի անձանց նկատմամբ ընդունված արտադատական խրախուսական իրավաբանական միջոց է, որի իմաստը կայանում է նրանց լրիվ կամ մասնակի քրեական (վարչական, քաղաքացիական) պատասխանատվությունից և պատժից ազատելու կամ այն ավելի մեղմ պատժով փոխարինելու, կամ էլ քրեական հետապնդումը դադարեցնելու մեջ: Երբեմն այն կիրառվում է որոշակի կատեգորիայի և սեռային հատկանիշներ ունեցող հանցագործների նկատմամբ, օրինակ՝ կանանց, անչափահասների, հաշմանդամների, ոչ մեծ ծանրության հանցանքներ կատարածների, ռազմագերիների, զինվորականների, կրոնական փոքրամասնությունների և այլն՝ դա կատարելով հումանիզմի նկատառումներով: Ներկայումս այն կիրառվում է նաև պրակտիկ նպատակներով՝ ազատազրկման վայրերը բեռնաթափելու, ինչպես նաև որոշակի կոնկրետ քաղաքական նպատակներով:

Համարվում է, որ առաջին համաներման ակտը, որ հունարեն կոչվում է ամնիստեա (amnestia) կամ ամնիստիա, այն է՝ մոռացում, աշխարհում առաջին անգամ հրապարակվել է Աթենքում պետական գործիչ, դեմոկրատ Ֆրասիբուլոսի (450—389 մ.թ.ա.) թելադրանքով Սպարտայի դրածո 30 բռնակալներին (տիրաններին) մ.թ.ա. 404թ. Աթենքից վտարելուց հետո: Այդ մասին Վալերիոս Մաքսիմոսը իր երկում (IV, 1.4) գրում է հետևյալը. «Ֆրասիբուլոսը... աթենական ժողովրդին հետ վերադարձրեց իր երկիր..., երբ նա երեսուն տիրանների դաժանության պատճառով ստիպված թողել էր իր տները՝ իրարից առանձին և պանդխտության մեջ քարշ տալով թշվառ գոյություն...: Չէ՞ որ նրա (Ֆրասիբուլոսի – Ս. Խ.) նախաձեռնությամբ է ժողովրդի կողմից **անցած այդ դեպքերի մասին հիշատակումն արգելող որոշում ընդունվել**: Այդ **մոռացման ակտով,** որը աթենացիները կոչում են **«ամնեստիա»,** պետության երերացող և անկման թեքված դրությունը վերադարձրեց նախկին վիճակին»[1]: Պետք է նշել, որ ամնիստիայի մասին այս որոշում-ակտը իր իմաստով այնքան էլ չի համապատասխանում ներկայիս ամնիստիայի ինստիտուտի հասկացությանը: Դրանով ոչ թե համաներում կամ ներում է հայտարարվել, այդ թվում՝ Աթենքը կառավարող 30 հանցագործ տիրաններին, այլ մոռացում հայտարարվել այն բոլոր բացասական դեպքերի մասին, որոնք կատարվել էին նրանց կողմից Աթենքը կառավարելու ընթացքում: Աթենացիները պատժի սպառնալիքով, փաստորեն, չպետք է հիշեին և հիշատակեին նրանց շահերին մեծ վնասներ հասցրած և պատիվն ու արժանապատվությունը ստորացնող այդ անձանց և նրանց կատարած դեպքերի մասին:

Պատմական գրականության մեջ երբեմն քննարկվում է նաև Հաննիբալի դեմ մղվող Փունիկյան երկրորդ պատերազմի ժամանակ Հռոմի սենատի կողմից հրապարակված ամնիստիայի ակտի հարցը, որով համաներում է հայտարարվել և թողություն տրվել Իտալիայի այն բոլոր քաղաքների բնակիչներին, որոնք անցած են եղել Հաննիբալի կողմը: Այդ մասին մակերեսորեն հայտնում են Ափիանոս Ալեքսանդրացին և Վալերիոս Մաքսիմոսը: Կարելի է կարծել, որ սենատի այդ որոշմամբ ներման են արժանացել ոչ թե իտալական քաղաքների ու նահանգների բոլոր բնակիչները, այլ միայն դրանց սենատների անդամները կամ «համայնք-ների ղեկավարներն» անվանապես: Եվ դա եղել է առանձին անձանց ներման ու նրանց կատարած հանցանքների մոռացման ակտ և ոչ թե նախապես և անհատապես չորոշված անձանց շրջանակի վրա տարածվող: Ընդ որում դա կատարվել է միայն տեղերում քննություն կատարելուց հետո, և միայն առանձին

[1] Валерий Максим. Девять книг достопамятных деяний и высказываний. Пер. с латинского, комментарий, вступительная статья А. М. Сморчкова, М., 2020, с. 179.

անհատներներ են ներում ստացել[1]: Երբեմն հիշատակվում է նաև Հուլիոս Կեսարի կողմից և նրա մահվան կապակցությամբ հայտարարված ամնիստիայի ակտերի մասին, սակայն դրանք ևս իրենց նշանակությամբ և իմաստով ոչ թե ամնիստիայի, այլ աբոլիցիայի և ներման ակտեր են հիշեցնում:

Ամնիստիայի պատմության համար առանձնահատուկ նշանակություն ունի Պ. Լյուբլինսկու համապատասխան աշխատությունը: Դրա 4-րդ գլխում, որը կոչվում է «Ամնիստիայի տեսակները», նա տարբերում է 1. կրոնական կամ թեոկրատական, 2. դինաստիական, և 3. քաղաքացիական-քաղաքական բնույթի ամնիստիայի տեսակներ: Վերջին տեսակի ամնիստիայի ենթատեսակներ են համարվում ա) ամնիստիա՝ հրապարակված հետապնդումներից հետո, բ) ամնիստիա՝ հրապարակված հեղափոխությունից հետո, գ) ամնիստիա՝ հրապարակված պետական կարգի ամրապնդման փուլում, և դ) ամնիստիա՝ հրապարակված հանցանքների մասսայաբար կատարումից հետո [2] : Հիշատակվում է նաև «էթիկական ձև» ունեցող ամնիստիայի մասին: Թեև այն համարվում է ամնիստիայի բարձրագույն ձև, սակայն դրա իմաստը չի բացահայտվում [3] : Հաջորդ գլուխներում Լյուբլինսկու կողմից բերվում են ամնիստիայի ակտի այլ տեսակներ ևս, որոնցից են լրիվ և ոչ լրիվ, տնտեսական և քաղաքական դրդապատճառներով հրապարակվող ամնիստիայի մասին ակտերը [4] : Լյուբլինսկու և այլ հեղինակների կողմից անդրադարձներ կան Եվրոպայում, Ռուսաստանում և ԽՍՀՄ-ում հրապարակված ամնիստիայի ակտերին[5], սակայն նրանք պատկերացում իսկ չունեն հայկական քրիստոնեական և պարսկական զրադաշտական իրականության մեջ, վաղ միջնադարում հրատարակված համաներման ակտերի մասին:

Համաներման երևույթն ինքնուրույնաբար առաջացել, առանձնահատուկ իմաստ, նշանակություն ու ձևեր է ընդունել 298-301թթ. տեղի ունեցած հայկական քրիստոնեական մեծ հեղափոխության ժամանակ: Այդպիսի բովանդակության

---

[1] Аппиан Александрийский, Римская история. Наука, 1998, с. 112-113; Валерий Максим. Նշվ. աշխ., էջ 140:

[2] Люблинский П. И., Право амнистии: историко-догматическое и политическое исследование, СПб., 1907.

[3] Люблинский П. И., նշվ. աշխ., էջ 146-154:

[4] Люблинский П. И., նշվ. աշխ., էջ 163-170:

[5] Самохин В. А., история развития институтов амнистии и помилования // Научно-образовательный журнал для студентов и преподавателей «StudNet», 2021, № 6, с. 678-691; Гришко А. Я., Потапов А. М., Амнистия. Помилование. Судимость. М., Логос, 2009; Додонов В. Н., Сравнительное уголовное право, М., Юрлитинформ, 2009; Уголоное право. Общая часть: учебник, отв. ред.И. Я. Козаченко. 4-е изд., перераб. и доп. М., «Норма», 2008, с. 643-659.

.

նորմատիվ ակտ առաջին անգամ հրապարակել է հայոց Տրդատ Երրորդ Մեծ թագավորը Քրիստոսի առաքյալներին նվիրված տոնի կապակցությամբ: Այն բացառիկ, աննախադեպ, եզակի, համընդհանրական և համապարփակ բնույթ ու նշանակություն ունեցող համաներման ակտ է: Դրա հրապարակման մասին Ագաթանգեղոսի երկում ուղղակի վկայություն չկա, և դրա որըմասին նրա երկում առկա են միայն անուղղակի տեղեկություններ: Սակայն բոլոր հիմքերը կան պնդելու, որ այդ ակտի մասին ուղղակի վկայություններ Ագաթանգեղոսի երկում եղել են, սակայն հետո հանվել՝ Գրիգոր Լուսավորչի դերը քրիստոնեության ընդունման մեջ ավելի մեծացնելու նկատառումներով: Բայց որ այդպիսի բնույթի հրամանագիր իսկապես էլ հրապարակվել է, ուղղակիորեն վկայված է 4-րդ դարի սկզբի քրիստոնյա քարոզիչ Զենոբ Գլակի գրած նամակներում, որոնք ամփոփված են «Տարոնի պատմություն» ժողովածուի մեջ, դրա 1941թ., և 1989թ. երևանյան հրատարակություններում (դրա մասին հիշատակությունը բացակայում է նույն երկի 1832թ. և 1889թ. վենետիկյան հրատարակություններում)[1], որը կազմվել է Մատենադարանում գտնվող շուրջ 50 ձեռագրերի հիման վրա:

«Տարոնի պատմություն» երկից պարզվում է, որ Հայաստանում համաներման մասին այդ հրամանագրի հրապարակումից առաջ մեկ այլ հրամանագրով սահմանված է եղել Քրիստոսի առաքյալների տոն: Այդպես է վերանվանված եղել Նավասարդի մեկին տոնվող զրադաշտական տոնը, որը կոչվում էր նոր պտղի կամ բերքի հավաքման «ցնծության մեծ տոն» և կատարվում էր ի պատիվ Ամանոր կամ հյուրընկալ Վանատուր աստծու, այն է՝ աստվածահայր Արամազդի: Արդյո՞ք բոլոր, թե՞ որոշ առաքյալների տոնի կապակցությամբ է ընդունվել համաներման մասին այս ակտը, պարզ չէ: Գուցե այդ տոնը կատարվել է «ի յիշատակ երանելի Յովհաննու և սրբոյն վկային Աստուծոյ Աթանագինէի», որի մասին գրում է Ագաթանգեղոսը, և որոնց մասունքները Հայաստան բերելու մասին տեղեկություններ են առկա նաև «Տարոնի պատմություն»-ում: Բայց միանշանակ է, որ նշված նոր քրիստոնեական տոնի առթիվ Վաղարշապատ մայրաքաղաքում ի թիվս այլ հրամանագրերի հայոց թագավոր Տրդատ Երրորդ Մեծ թագավորը հրապարակել է իր այդ աննախադեպ, բացառիկ համընդհանրական **համաներման ակտը**: Դրանով սահմանվում է, որ այդ օրը **«եղավ նաև բոլոր պարտատերերի ու հանցապարտների ազատագրման օր**,

---

[1] **Հովհ. Մամիկոնյան,** Պատմութիւն Տարօնոյ, կազմեց և հրատ. պատրաստեց պրոֆ. Ա. Աբրահամյան, Երևան, 1941, **Հովհ. Մամիկոնյան,** Տարոնի պատմություն**,** աշխատասիրությամբ՝ Վ. Հ. Վարդանյանի, խմբ.՝ Ա. Ս. Սահակյանի, Երևան, «խորհրդային գրող», 1989, **Զենոբ Գլակ Ասորի,** Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1832, էջ 16, **նույնի**՝ Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1889:

իսկ նրանց էլ, որ բանտերում էին և շղթայակապ, հրամայեց ազատել երկաթյա կապանքներից»:

Այն հանգամանքը, որ այն ընդունվել է ոչ ազգային և քրիստոնաեական նոր սահմանված տոներից մեկի կապակցությամբ զրադաշտական երկրում, ինքնին նշանակալից է: Արևմուտքում ամնիստիայի որևէ ակտի հրապարակում՝ կապված նույնիսկ որևէ հեթանոսական տոնի հետ, չի եղել երբեք: Իսկ այստեղ պարզվում է, որ մինչ այդ Հայաստանում օրենսդրորեն սահմանված են եղել քրիստոնեական տոներ, և չեղարկվել զրադաշտականները: Այս հանգամանքը երկրի արդեն իսկ քրիստոնեացված լինելու ամենածանրակշիռ ապացույցներից է: Նման վկայագիր է նաև համաներման այս ակտը: Այն ոչ միայն կրոնաիրավական կամ քաղաքական բնույթի խրախուսական ակտ է՝ վերաբերող որոշակի շրջանակի պատկանող անձանց կողմից **անցյալում** կատարած հանցանքների **մոռացմանը**, քրեական պատասխանատվությունից և պատժից նրանց ազատելուն, այլև ունի ապագային միտված հեղափոխական-քաղաքակթական բնույթ, ուղղված է քրիստոնեական մեծ հեղափոխության գլխավոր նպատակներին հասնելուն, այն է՝ քրիստոնեական պետություն և իրավական սիստեմ հիմնելուն: Եվ այդ ակտը իրավական սիստեմի կառուցման առաջին էական և արժեքավոր դրսևորումներից է՝ ընդունված քրիստոնեական մեծ հեղափոխության ժամանակ, դրա գաղափարների, նորմերի ու հավատալիքների ագիտացիայի ու պրոպագանդայի եռուն շրջանում: Այն, անկասկած, հրապարակվել է Գրիգոր Լուսավորչի կողմից Կեսարիայից վերադառնալուց հետո, որտեղ նա ձեռնադրվել էր եպիսկոպոս: Եվ այն տեղի է ունեցել 298-301թթ. մինչ իմպերատոր Դիոկղետիանոսի կողմից 303-304թթ. հակաքրիստոնեական հրամանագրերի հրապարակումը: Եվ ոչ թե 312թ. հետո, ինչպես անհիմն կերպով ենթադրում են ոմանք[1]:

Համաներման նշված հրամանագիրը պարունակում է կարգավորող նորմ, որի ներքին տրամաբանական կառուցվածքը համապատասխանում է նշանավոր տրամաբանական «եթե (քանի որ)-ապա-հակառակ դեպքում» ֆորմուլային: Դրա քաղաքակրթական և կրոնաիրավական-արժեբանական նշանակությունը և իմաստը կայանում է նրանում, որ այն հրապարակվել է Քրիստոսի առաքյալների տոնի օրը՝ հետևող մեկամսյա պասին: Նշված հանգամանքը կատարում է համաներման ակտի պարունակած նորմի **հիպոթեզի** (պայմանի) դեր: Այդպիսի դեր են կատարում նաև մինչ այդ հրապարակված այլ բազմաթիվ հրամանագրեր՝ այդ թվում նոր տոներ սահմանող: Դրանից պարզ է դառնում, որ տոնը կոչվել է նաև «նոր պտղոց տոն» և կապված է եղել հյուրընկալության և ստացված բերքից

---

[1] **Վարդանյան Վ. Մ.,** Գրիգոր Լուսավորչի ձեռնադրության, հայոց ամբողջական դարձի հանգամանքների շուրջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2001, № 1, էջ 6:

եկեղեցուն (նախկինում՝ զրադաշտական տաճարին), աղքատներին, հյուրերին, օտարականներին կամավոր կերպով բաժին տալու երևույթի հետ:

Համաներման այդ հրամանագիրը՝ տեղ գտած «Տարոնի պատմություն» երկում, լրիվ չէ: Մասնավորապես դրանում թերի և ոչ լրիվ է ներկայացված նորմի **դիսպոզիցիան**, դրա նկարագրական մասը, այն սուբյեկտների իրավունքների ու պարտականությունների շրջանակը, որոնց վրա տարածվում է: Դրանում սահմանված է, որ **բոլոր պարտատերերն ու հանցապարտները** (քրեական պատասխանատվության ենթակա) և բանտերում գտնվողները (արդեն պատժված և դատապարտվածները) **անհապաղ ազատվում են: Թեթևացվում է նաև բանտերում շղթայակապ կերպով պատիժը կրողների վիճակը, և նրանք շարունակում են ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրել առանց կապանքների**: Համաներման այդ հրամանագիրն ունի շարունակություն: Այն մասամբ գտնվում է Ագաթանգեղոսի երկի 844-րդ պարբերությունում, որում, փաստորեն, առկա է նաև նշված **դիսպոզիցիայի** շարունակությունը: Դրանում ասված է, որ Գրիգոր Լուսավորիչը. «...**բազում բանդականաց, և կալանաւորաց և տագնապելոց ի բռնաւորաց փրկութիւն արարեալ, կորզելով զնոսա ահաւոր զօրութեամբ փառացն Քրիստոսի**. և **բազում մուրհակս անիրաւագիրս պատառեաց, և բազում սգաւորաց կարճամտելոց մխիթարական վարդապետութեամբն զակնկալութիւն յուսոյն ըստ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ և ամենափրկչին Յիսուսի Քրիստոսի նուաճեաց. և զամենայն միանգամայն յաստուածապաշտութեան պայմանն (կարգին – Ս.Խ.) փոխեաց**»[1]:

Ինչպես ակնհայտ է, հայոց թագավորի կողմից «Տարոնի պատմություն»-ում տեղ գտած համաներման ակտը և Ագաթանգեղոսի երկի 844-րդ պարբերությունում նկարագրված Գրիգոր Լուսավորչի գործունեությունը նույն ուղղությամբ իրար հետ գտնվում են տրամաբանական անքակտելի կապի մեջ: Ըստ այդ 844-րդ պարբերության՝ Գրիգոր Լուսավորիչը (և այլ քարոզիչ հոգևորականներ) իրականացրել է թագավորի համաներման հրամանագրից բխող լիազորություններ, որոնք նույնպես մաս են կազմում նշված **հրամանագրի պարունակած նորմի դիսպոզիցիայի**: Գրիգոր Լուսավորչին (ու նրա քարոզիչներին) իրավունք է տրվել այցելել բանտեր և դրանցում գտնվող կալանավորներին ու դատապարտյալներին զանգվածաբար ազատել պատժի կրումից, նրանց շրջանում կատարել քարոզչություն և նրանց քրիստոնեացնել: Բացի դրանից՝ Գրիգոր Լուսավորչին թույլ է տրվել ազատել նաև դեռևս չդատապարտված, բայց բռնավորների կողմից արդեն իսկ պատիժների

[1] **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն, երևան, 1983, էջ 470, 471:

սպառնալիքով «տագնապեցրած» և զանազան պատիժների ու պատուհասների սպասող անձանց:

Տարբեր պատմական հուշարձաններում գտնվող Տրդատ Երրորդ Մեծի համաներման հրամանագրի այս մասերի տրամաբանական կապը նույնպես ապացույց է այն բանի, որ այն իսկապես էլ հրապարակվել, գործել և հետևանքներ է առաջացրել: Առանց դրանով իրեն վերապահված լիազորությունների Գրիգոր Լուսավորիչը (և այլ քարոզիչ հոգևորականներ) չէր կարող այցելել պետական բանտեր, ազատել կալանավորների, պատռել անիրավագիր մուրհակներ և այլն: Թեև նա եղել է հայոց համընդհանրական եկեղեցու ղեկավարը և պետության գլխավոր դատավորը, Տրդատ Երրորդ Մեծ թագավորից հետո երկրորդ պաշտոնատար անձը, քրիստոնեական մեծ հեղափոխության գաղափարախոսն ու քրիստոնեական պոզիտիվ իրավակրոնական սիստեմի ստեղծողը, սակայն դրանով հանդերձ առանց թագավորական համաներման այս ակտի, նա չէր կարող նման գործողություններ կատարել. նա միայն իրականացրել է համաներման ակտից բխող իրավունքներ ու պարտականություններ:

Սակայն համաներման այս ակտով (կամ մեկ այլ ակտով, սակայն ավելի հավանական է, որ սրանով) նաև եկեղեցին (այդ թվում՝ վանքերի համակարգը) և հոգևորականությունն է ազատվել հարկերից և տուրքերից: Ավելին, հայտարարվել է նաև հարկային համաներում, որոնք նույնպես **նորմի դիսպոզիցիայի** մասեր են: Իսկ դա նշանակում է, որ համաներման մասին այս հրամանագիրն ունեցել է ոչ միայն կրոնաիրավական, քաղաքական և քաղաքակրթական, այլև տնտեսական բնույթ: Դրանց մասին «Տարոնի պատմության» և Ագաթանգեղոսի երկում ներկայացված այդ հրամանագրի պատառիկներում ուղղակի նշում բացակայում է: Սակայն հանգամանքը, որ Տրդատ Երրորդ Մեծը հայոց եկեղեցին և վանքերը, ինչպես նաև եկեղեցականներին ու վանականներին համաներման այս կամ մեկ այլ ակտով և նշված ժամանակ ազատած է եղել հարկերից՝ ուղղակիորեն վկայված է «Դաշանց թղթում», հայ պատմիչների երկերում և «Հաճախապատում ճառքում»:

Այսպես, պատմիչ Եղիշեն իր երկի 2-րդ գլխում հայտնում է, որ Հազկերտ Երկրորդի (438-457թթ.) կողմից Հայաստանը բռնի կերպով զրադաշտա-կանացնելիս նրա մի հրամանագրով «սուրբ եկեղեցին, որ **էր ազատ ի Քրիստոս, ըստ կարգի նախնեաց մերոց և ի սկզբանէ, և դու ընդ հարկավ եղիր**»: Այսպիսով, ուղղակիորեն նշվում է, որ «ի սկզբանե» քրիստոնեական եկեղեցին և եկեղեցականները եղել են անհարկ՝ ազատված ամեն տեսակի հարկերից, և այդպես մինչև Հազկերտ Երկրորդի կողմից նրանց հարկադրելը (449-451թթ.): Ընդ որում հոգևորականները, այդ թվում՝ «միայնակյացները», այս թագավորի կողմից հարկվել են գլխահարկով, գույքահարկով և հողի հարկով, զրկվել նաև

պատղիից՝ կամավորաբար բերքից նրանց տրվող փայաբաժնից[1]: Իսկ այդ ամենը նշանակում է, որ եկեղեցին և վանքերը հարկերից ազատված և իրավաբանական անձի կարգավիճակ են ստացած եղել Տրդատ Երրորդի կողմից շուրջ 150 տարի դրանից առաջ: Եղիշեն նշում է նաև, որ Հազկերտ Երկրորդը «սկսել է առաջ քաշել կրտսերներին ավագների միջից»՝ խախտելով «Գահնամակ»-ում սահմանված նախարարական աստիճանակարգվածությունը, ինչպես նաև նախընտրել «անարգներին՝ պատվականների միջից, և տգետներին՝ գիտունների միջից» և այլն: Նման իրավական քաղաքականությունը, ինչպես կպարզվի, շարունակել է նաև նրա որդին՝ Պերոզը[2]:

Պատմիչ Փ. Բուզանդն էլ հայտնում է (դպր. 5-րդ, գլ. ԼԱ), որ Պապ թագավորը (368-374թթ.) Ներսես կաթողիկոսին իբր սպանելուց հետո ավերել է նրա ստեղծած (վերստեղծած) որբանոցները, հիվանդանոցները, հյուրանոցները, այրիանոցները և «**կուսաստանները**»: Հատկապես կուսանոցների մասին ասվում է հետևյալը. «զի որ միանգամ կուսանք և հաւատացեալք իցեն՝ անդր ժողովեսցին ի պահս և յաղօթս, և **կերակրել յաշխարհէ և յիւրաքանչիւր ընտանեաց**: Զայն **աւերել հրամայէր** Պապ թագաւորն, **և զկուսանսն հաւատացեալս տայր հրաման ի խառնակութիւն պղծութեան**»[3]: Ակնհայտ է դառնում, որ կուսանոց-ներում պատսպարված կույսերը կերակրվել են տեղական համայնքների ու իրենց ընտանիքների հաշվին և հարկված չեն եղել: Եվ որ կուսանոցները ոչ միայն Պապ թագավորի հրամանագրով լուծարվել են, այլև կույսերին ստիպել են ամուսնանալ՝ որդեծնությանը Հայաստանում զարկ տալու նպատակով, ինչպես որ ժամանակին վարվել էր իմպերատոր Դիոկղետիանոս՝ հրապարակելով «Ամուսնության մասին» իր նշանավոր հրամանագիրը: Այլ կերպ հնարավոր չէ մեկնաբանել կույսերին «խառնակութիւն պղծութեան» հանձնելու մասին արտահայտությունը:

Փ. Բուզանդը նշում է նաև, որ Պապ թագավորի հրամանով «...**զկարգս պտղոյն և զտասանորդացն**, **որ ի նախնեացն կարգեալ սովորութիւն էր տալ յեկեղեցին,** վասն այսօրիկ **հանէր հրաման ընդ աշխարհն՝ զի մի ոք տացէ**»: Այսպիսով, եկեղեցին զրկվել է տասանորդ կոչված հարկից, որը նրանց է վճարվել ամեն մի տնտեսվարողի կողմից եկամտի 10 տկոսի չափով, ինչպես նաև պտղի կոչվածից՝ տրվող կամավորականության սկզբունքով ու չափով: Դա սահմանված է եղել «նախնյաց կարգով»: Իսկ դա նշանակում է, որ ժամանակին Տրդատ Մեծը եկեղեցին և վանքերը ազատած է եղել ամեն տեսակի հարկերից և պարհակներից: Բացի դրանից՝ զգալիորեն նվազեցվել են հոգևորականների հողաբաժինները, որոնք նրանց տրվել էին դեռևս Տրդատ Երրորդ թագավորի

---

[1] **Եղիշե**, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1989, էջ 44-45, 92-93:

[2] **Եղիշե**, նշվ. աշխ., էջ 32-33:

[3] **Փավստոս Բուզանդ,** Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1987, էջ 348-353, 442:

կողմից նրա հրամանագրերից մեկով[1]: Այսպիսով, կարելի է ապացուցված համարել, որ նշված համաներման հրամանագրով եկեղեցին և կուսանոցները, ինչպես նաև հոգևորականները և վանականներն ազատված են եղել որևէ հարկից և տուրքից: Քանի որ այդ հրամանագիրը հրապարակվել է Քրիստոսի առաքյալներին նվիրված տոնի օրը, ապա տրամանաբանական է, որ նրանց ծառայող հոգևորականները ազատվեին հենց այս հրամանագրով:

Փաստն այն մասին, որ եկեղեցին և մենաստանները կամ վանքերը թագավորական այս հրամանագրով ազատված են եղել բոլոր տեսակի հարկերից, հիմնավորվում է նաև Գրիգոր Լուսավորչի «Հաճախապատում ճառք»-ի 23-րդ ճառի տվյալներով[2]: Դրանից պարզվում է, որ եկեղեցին և վանքերը, ունենալով նաև սեփական հողատարածքներ և եկամտաբեր տնտեսություններ, դրանցից ստացած նյութական միջոցներն ուղղել են ոչ միայն իրենց կարիքների բավարարմանը, այլև ապահովել դպրոցների, հյուրանոցների, հիվանդանոցների, աղքատանոցների, գործունեությունը, ստեղծել ֆոնդեր՝ այրիներին, որբերին, աղքատներին, հյուրերին և հիվանդներին ապահովելու համար: Անկասկած, եկեղեցուն և վանքերին հարկերից ազատելու իրավունքը և պետության կողմից նրանցից հարկեր չհավաքելու պարտականությունը նույնպես պետք է դիտել այս հրամանագրի պարունակած նորմի բովանդակության, դիսպոզիցիայի մաս: Եվ այն ունեցել է նաև տնտեսական բովանդակություն: Սակայն դրանով հրամանագրի տնտեսական բովանդակությունը չի ամբողջանում: Այն եղել է ավելի ընդգրկուն և տարածվել նաև բոլոր հարկատուների վրա: Բոլոր տնտեսվարողները ինչ-որ ժամկետով ազատվել են հարկեր վճարելու պարտականությունից:

Ագաթանգեղոսի երկի որոշ հրատարակություններում տեղ է գտել «Թուղթ սիրոյ և միաբանութեան մեծի կայսերն Կոստանդիանոսի և սուրբ պապին Սեղբեստրոսի և Տրդատայ թագաւորի և սրբոյն Գրիգորի» պետահիրավական նշանակության փաստաթղթերի մի փաթեթ՝ հայտնի «Դաշանց թուղթ» անվանումով[3]: Հայկական պատմագրության մեջ այն համարվում է կեղծ, որն իբր ապացուցել է ոմն Կ. Շահնազարյան[4]: Սակայն դա այդպես չէ: Այն լիովին

---

[1] **Փավստոս Բուզանդ,** նշվ. աշխ., էջ 348-353, 442:

[2] Հաճախապատում ճառք, Մատենագիրք հայոց, Ա հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 128-137:

[3] Թուղթ սիրոյ և միաբանութեան մեծի կայսերն Կոստանդիանոսի և սուրբ պապին Սեղբեստրոսի. և Տրդատայ թագաւորին, և սրբոյն Գրիգորի//**Ագաթանգեղոս,** յորում պարունակի պատմութիւն Տրդատայ արքայի, և սրբոյն Գրիգորի, եվ ևս՝ աստուածախոս վարդապետութեան նորին սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ, Յորթագիւղ, ի տպարանի Պողոսի Արապեան, 1922, էջ 331-363:

[4] **Շահնազարյան Կ.,** Դաշանց թղթոյ քննութիւնն ու հերքումը, Փարիզ, 1862, էջ 11-30:

վավերական է և պարունակում է ոչ միայն հայտնի դաշինքի պայմանագիրը հայոց և հռոմեացիների միջև, այլև դրանում առկա են այլ կարևոր իրավական ակտեր՝ հրամանագրեր, կոնդակներ և այլն՝ հրապարակված 326թ.՝ Կոնստանտին Մեծի վեցինալիան (իշխանության գալու քսանամյակը) Հռոմում տոնելու ժամանակ[1]: Դրանում նույնպես հիշատակվում է հայոց թագավորի հրապարակած այս հրամանագրի մասին, բերվում դրա սեղմ բովանդակությունը՝ տեղ գտած իմպերատոր Կոնստանտին Մեծի սեղմ ելույթում: Դրանում ասված է. «ի հրամանէ սրբոց Լուսավորչիս՝ **ազատեսցին գերեալք. արձակեսցին կապեալք. զերծեսցին բանտարկեալք. պատռեսցին մուրակք պարտականաց. Դատ և իրաւունք ելցեն յարքունուստ ամբողջ որբոց և այրեաց, և հայրենազրկաց: Իսկ ի հրամանէ քաջարանց եղբօր մերոյ Տրդատայ՝ դարձցին ամենայն դատապարտեալք,** որք **ի քրեական մետաղից իցեն** (ենթակա են մահապատժի՝ մաշկը մետաղից դանակով **քերելու**, **մաշկազերծ անելու միջոցով – Ս.Խ.), թողցին ամենայն պարտք արքունականք,** ընդ որս և աղ օրինութեան հրամանավ Լուսավորչիս առաքեցաք ընդ ամենայն աշխարհս իշխանութեան մերում, ի սպանդանոցս և առտնին զենլիս. Զի մի հեթանոսաբար լիցի խրախութիւնս մեր: **Նաև զդավանութիւն հաւատոյ սուրբ հօրս մերոյ Գրիգորի, արձանագրով քարոզեցաք յամենայն եկեղեցիս ուղղափառաց**»[2]:

Ակներև է, որ խոսքն իսկապես էլ արդեն քննարկած նույն համաներման հրամանագրի մասին է: Դրանից ոչ միայն պարզ է դառնում հանգամանքը, որ նշված հրամանագրով քրեական պատասխանատվությունից ու պատժից ազատվել են հանցագործներ, և առանձնապես ծանր հանցագործություններ կատարած բանտարկյալների վիճակը թեթևացվել, բարելավվել, և նրանք միայն ազատվել են կապանքներից, այլև նրանք կամ նրանց մի մասը՝ դատապարտված մահապատժի «քրեական (քերող) մետաղի» միջոցով, նույնպես ազատվել են պատժից: Պետք է նշել նաև, որ հանցագործին կապելն ինքնին եղել է պատիժ, ունեցել տեսակներ, որոնցից ամենածանրը երկաթյա կապանքներով բանտում պահվելն է[3]: Պարզ է դառնում նաև, թե ինչու է հայոց պատժական իրավունքը կոչվել քրեական իրավունք. «քրեական» բառը առաջացել է «քերել» և ոչ թե

---

[1] «Դաշանց թղթի» վավերականության ապացուցմանը նվիրված է շուտով հրատարակվելիք մեր մի առանձին աշխատությունը, որում բոլոր «ապացույցները»՝ բերված այս վարդապետի կողմից, հերքվել են:

[2] Թուղթ սիրոյ և միաբանութեան…, էջ 333, **Շահնազարյան Կ.,** Դաշանց թղթոյ քննութիւնն ու հերքումը, էջ 13-14:

[3] **Խաչատրյան Ս. Ա.,** Կապելը որպես խափանման միջոց, քննության մեթոդ և պատժատեսակ՝ ըստ զրադաշտական և հին հայկական քրիստոնեական իրավունքի, «Արդարադատություն» գիտական հանդես, 2017, № 4, էջ 21-26: Շարունակությունը՝ նույն գիտական հանդեսում, 2017, № 5, էջ 9-15:

«քուրա» բառից, ինչպես որ կարծում են որոշ հայ քրեագետ գիտնականներ: Բացի ամենայնից՝ պարզ է դառնում, որ հայոց թագավորի կողմից այդ նույն հրամանագրով հայտարարված է եղել **հարկային ամնիստիա**: Եվ դրանով հարկերից ու տուրքերից ազատվել են ոչ միայն եկեղեցին, վանքերը, եկեղեցականներն ու վանականները, այլև բոլոր տնտեսվարողները («**թողցին ամենայն պարտք արքունականք**»): Միայն պարզ չի դառնում, թե ինչ տևողությամբ է այն գործել և զիջած հարկերի ինչպիսի չափի ու տեսակների մասին է խոսքը: Սրանով համաներման համընդհանրական, քաղաքակրթական այս հրամանագրի, դրա պարունակած նորմի բավանդակությունը և դիսպոզիցիան ամբողջանում է:

Հասկանալի է նաև, որ Գրիգոր Լուսավորչին վերագրող գործողություն-ները՝ բանտերից հանցագործներ ազատելը, անիրավագիր մուրհակներ պատռելը և այլն, չէին կարող կատարվել առանց թագավորական ամնիստիայի հրապարակման (թեև նա է եղել այդ ակտի հրապարակման նախաձեռնողը): Դրանց նախորդել է թագավորի վերոնշված համաներման ակտը: Կորյունը Գրիգոր Լուսավորչի այս արարքները վերագրում է Մեսրոպ Մաշտոցին, որը ճիշտ չէ և մեր կողմից լիովին ու սպառիչ կերպով հերքվել է[1]: Մաշտոցը պաշտոնատար անձ չի եղել, ապրել և գործել է պարսկական պետության մեջ, որտեղ նման ակտի հրապարակումը և դրանից բխող գործունեությունը պարզապես անհնար էր: Նրա կենսագործունեության ժամանակ որևէ թագավոր ամնիստիայի ակտ չի հրապարակել և չէր կարող դա անել: Նա պետաիրավական լիազորություններ չի ունեցել, եկեղեցական հիերարխիայում որևէ պաշտոն չի զբաղեցրել, բանտեր այցելելու և բանտարկյալներ ազատելու կամ նրանց վիճակը թեթևացնելու լիազորություններ որևէ մեկի կողմից ստացած չի եղել և չէր կարող ստանալ: Նա չէր կարող նաև մուհակներ պատռել և իրեն նման հակաիրավական արարք թույլ տալ: Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ նման լիազորություն չուներ, այլև իրեն թույլ չէր տա դա անել հեզ և հնազանդ լինելու պատճառով: Նրա կենսագործունեության ժամանակ նաև բացակայում էր այնպիսի հեղափոխական իրադրություն, որի պայմաններում նման գործունեությունը կարող էր դիտվել օրինաչափ՝ նոր մշակվող քրիստոնեական իրավունքի դիրքերից[2]: Պետք է նշել

---

[1] **Խաչատրյան Ս. Ա.,** «Հաճախապատում ճառքի» հեղինակության հարցի շուրջ, ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, № 14, 2012, էջ 567-579, **նույնի՝** «Հաճախապատում ճառքի» հեղինակության և հայկական այբուբենի ստեղծման հարցերի շուրջ, երկրորդ հրատ., Երևան, «Լուսաբաց», 2020:

[2] **Խաչատրյան Ս. Ա.,** «Հաճախապատում ճառքի» հեղինակության հարցի շուրջ, ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, № 14, 2012, էջ 567-579, **նույնի՝** «Հաճախապատում

նաև, որ Գրիգոր Լուսավորիչը այս դեպքում հանդես է եկել որպես Տրդատ մեծ թագավորի հրապարակած համաներման ակտի պահանջները կատարող: Հրամանագրի պարունակած նորմն ունի նաև **սանկցիա** («հակառակ դեպքում»): Դրա կատարումն ապահված է եղել պետական հարկադրանքի ուժով: Գրիգոր Լուսավորչին ու նրա քարոզիչներին ուղեկցել է զորք, անհրաժեշտության դեպքում միջամտող դեպքերին ուժ կիրառելու միջոցով, ինչպես դա եղել է Երազամույնում և Աշտիշատում զրադաշտական տաճարները քանդելիս և քրմերին հալածելիս:

Այսպիսով, աներկբա է դառնում, որ հայոց Տրդատ Երրորդ Մեծ թագավորի կողմից հրապարակած համաներման հրամանագրով ոչ միայն **մոռացության են տրվել** որոշակի, նախապես չորոշված թվով անձանց կողմից կատարված հանցանքներ և թեթևացվել է նրանց բանտարկության ընթացքում պատժի կրման պայմանները, պատռվել անիրավագիր մուրհակներ, և ոչ միայն եկեղեցին և վանքերն ու նրանց սպասավորներն են ազատվել հարկերից ու տուրքերից, այլև բոլոր հարկատուներն ինչ-որ ժամանակով: Այն ոչ միայն անցյալին ուղղված և բոլոր հանցանքները ու հանցագործներին մոռացություն մատնող կամ դա խոստացող խրախուսական կրոնահրավական, քաղաքական և տնտեսական բնույթ ունեցող կատարյալ հրամանագիր է, այլև ապագային միտված և քաղաքակրթական բնույթ ունեցող, նոր հասարակության, քրիստոնեական քաղաքակրթությանն ու կուլտուրային, քրիստոնեական առաջին պետության և իրավական սիստեմին հիմք դնող նորմատիվ ակտ, որով նաև վերացվել են դրանց կերտման առջև ծառացած խոչընդոտները, այլև աշխարհում առաջին, համընդհանրական ունիկալ և եզակի հրամանագիրն է՝ համաշ-խարհային նշանակության հետևանքներով, որի մեջ երևան է գալիս զուտ արժեքավորություն: Եվ բոլոր տեսակետից այն շատ ավելի նշանակալից է, քան մինչ այդ և դրանից հետո հունական, հռոմեական, հայկական և զրադաշտական իրականության մեջ հրապարակածները: Սրանով նաև կարևորվում են Հ. Ռիկերտի ձևակերպած անհատականացման (ինդիվիդուալիզացման) և գեներա-լիզացման (ընդհանրացման), Վ. Վինդելբանդի սահմանած իդիոգրաֆիական և նոմոտետիկական մեթոդները՝ կիրառված այս և այլ, ստորև ներկայացվող իրավական ակտերը քննարկելիս և գնահատելիս[1]: Դրանց միջոցով որոշվում է տվյալ ակտի ունիկալությունը և եզակիությունը:

ճառքի» հեղինակության և հայկական այբուբենի ստեղծման հարցերի շուրջ, երկրորդ հրատ., Երևան, «Լուսաբաց», 2020:

[1] Риккерт Г., Науки о природе и науки о культуре//Науки о природе и науки о культуре, М., Республика, 1998, с. 8-9; 16, 66-103, 103-122; Виндельбанд В., Прелюдии, СПБ, 1904, с. 320-333.

Մեր նախկին աշխատանքներում արդեն իսկ հիմնավորվել է, որ մ. թ. 298-301թթ. Մեծ Հայաստանում տեղի ունեցած հայկական քրիստոնեական մեծ հեղափոխության գաղափարները, նորմերն ու հավատալիքները, Գրիգոր Լուսավորչի, Տրդատ Երրորդ մեծ թագավորի ու նրանց շուրջ համախմբված նշանավոր քրիստոնեական քարոզիչների ակտիվ քարոզության շնորհիվ տարածվել են նաև հռոմեական իմպերիայում: Դրա արդյունքներից են իմպերատորներ Գալերիոսի 311թ. և Կոնստանտին Մեծի կողմից 313թ. հրապարակված «Հանդուրժողականության մասին» նորմատիվ էդիկտները, որոնցով եկեղեցուն շնորհվել է իրավաբանական անձի կարգավիճակ և դուրս բերվել ընդհատակից[1]:

Սակայն դրանցից ոչ պակաս ֆենոմենալ և եզակի արժեբանական իմաստ, բնույթ և նշանակություն ունի նաև 326 թվականին իմպերատոր Կոնստանտին Մեծի կողմից Հռոմում հրապարակած մեկ այլ **համաներման հրամանագիր**,որը նույնպես գտնվում է «Դաշանց թուղթ» կոչվող փաստաթղթերի փաթեթում: Ակնհայտ է դառնում, որ այն ոչ միայն Տրդատ Երրորդ Մեծի կողմից հրապարակած վերոնշված համաներման ակտի և հայկական քրիստոնեական մեծ հեղափոխության արդյունք և հետևանք է, այլև իր բովանդակությամբ և էությամբ տրամաբանական-պատճառական հարազատական կապի մեջ է այն բազմաթիվ էդիկտների հետ, որոնք ընդունվել են իմպերատոր Լիկինիոսին վերջնականապես հաղթելուց հետո (324թ.), որոնց մասին Եվս. Կեսարացին հիշատակում է իր «Կոնստանտինի կյանք»-ը երկի 2-րդ գլխի 20-52-րդ գլուխներում[2], այլև հայոց թագավորի կողմից ընդունած համաներման այս ակտի:

Դրանում իմպերատորը մասնավորապես սահմանում է հետևյալը. «**Արդ եկեղեցիք և եկեղեցականք և վանք և վանականք ամբողջ գոյիւք իւրեանց ազատ՝ անհարկ լիցին ամենայն դիմոսական հարկած արքունի. Նաև որք ունին զնշան կուսության, և պարկեշտութեան արք և կանայք, չոխազգեստք և պարեգոտա-համդերձք, ամենեքեան ազատք լիցին և արքունուստ զգեցցին և կերակրեսցին: Իսկ որք անհնազանդք լիցին հրամանաց մերոց և ընդ հարկավ արկանեն** զեկեղեցի կամ զքահանայ, զկրոնաւոր կամ զհաւատաւոր, հարեալ, հալածել լիցին երեսացն Աստծոյ և որոշեալ ի հաղորդութենէ սուրբ հաւատոյս. **և պատիժ պատուհասի կրեսցեն ի մերմէ** թագաւորութենէս և յամենայն

[1] Евсевий Кесарийский, Жизнь Константина. Перевод СПб Духовной Академии, пересмотрен и исправлен Серповой В. В., Примечания Л. М. Калинина. М., «Labarum», 1998, с. 27-45 (ինտեռնետային տարբերակ), **նույնի՝** Церковная история. СПб., изд. Олега Обышко, 2013, с. 392-395, 437-439.

[2] Евсевий Кесарийский, Жизнь Константина, էջ 33-52:

աթոռակալաց մերոց»: Բացի դրանից՝ սահմանվում է, որ դաղմատացիները և հայերը ազատվում են գլխահարկից[1]:

Կոնստանտին Մեծի այս հրամանագրի բովանդակությունը ներքին դոկտրինալ, տրամաբանական (դեոնտիկական) կառուցվածքի տեսակետից պարունակում է կարգավորիչ նորմ՝ նույնպես բաղկացած **հիպոթեզից, դիսպոզիցիայից և սանկցիայից**: Դրա պարունակած **հիպոթեզ-պայմանը** («եթե կամ քանի որ») ոչ միայն հայոց թագավորի համաներման և այլ հրամանագրերն են, այլև 313թ. Միլանի էդիկտի այն դրույթը, որի համաձայն քրիստոնեական եկեղեցուն արդեն իսկ շնորհված է եղել իրավաբանական անձի կարգավիճակ, և նրան իրավահարաբերությունների լիարժեք մասնակցի հնարավորություն է տրվել: Այդ պայմանի հիման վրա ձևակերպված է դրա **դիսպոզիցիան («ապա»),** համաձայն որի «**Արդ եկեղեցիք և եկեղեցականք և վանք և վանականք ամբողջ գոյիւք իւրեանց ազատ՝ անհարկ լիցին ամենայն դիմոսական հարկած արքունի**»: Սահմանվում է նաև, որ **«Դաղմատացիք և հայոց (հայերը) ամենևին անգլխահարկ լիցին»** [2] : Ակնհայտ է դառնում, որ հռոմեական եկեղեցին, վանքերը, եկեղեցականներն ու վանականներն ազատվել են հարկ վճարելու պարտականությունից: Հատուկ կերպով անդրադարձ է կատարվել եկեղեցու այնպիսի ստորաբաժանումների իրավունքների ու պարտականությունների հարցին, ինչպիսիք են վանքերը (կանանց և արական): Դրանք և դրանց անդամները հայտարարվել են ոչ միայն հարկեր վճարելու պարտականությունից ազատված, այլև ստացել արքունիքի, այն է՝ պետության հաշվին զգեստավորվելու ու կերակրվելու իրավունք և դրվել պետության հովանավորության ներքո: Բացի դրանից՝ իմպերիայում բնակվող հայերը, ինչպես նաև դաղմատացիները (իմպերատորի և հայոց թագավորի ազգակիցները) ազատվել են գլխահարկից: Ո՞ր իմպերատորն է այդ հարկատեսակը սահմանած եղել հռոմեական իմպերիայի հայկական և դաղմատական նահանգների ազգաբնակչության վրա, պարզ չէ: Կարելի է ենթադրել, որ դա արել է կամ իմպերատոր Մաքսիմինոսը, կամ էլ նրան հաջորդած և Կոնստանտին Մեծին նախորդած Լիկիանեսը:

Հարց է առաջանում, թե ինչ պատճառով են վանքերն օժտվել ազատության նման չափով, և ինչու է այդ հանգամանքը հատկապես շեշտվում:

---

[1] Պետք է նշել, որ «Դաշանց թղթի» այս հատվածի շարադրանքում տարբերություններ կան Կ. Շահնազարյանի բերած և Ագաթանգեղոսի երկի վերջում տեղադրված տեքստում: Մասնավորապես Ագաթանգեղոսի երկի տեքստում բացակայում է «և պարկեշտության» արտահայտությունը:

[2] Թուղթ սիրոյ և միաբանութեան մեծի կայսերն Կոստանդիանոսի և սուրբ պապին Սեղբեստրոսի…., էջ 331-363, **Շահնազարյան Կ.,** Դաշանց թղթոյ քննութիւնն ու հերքումը, 1862, էջ 23:

Դա արվել է ինչպես հայոց թագավորի վերոնշված հրամանագրի, այնպես էլ Հռիփսիմյան կուսանոցի և անձամբ սուրբ Հռիփսիմեի եղերական պատմության ազդեցության տակ, որի մասին Կոնստանտին Մեծը «Դաշանց թղթում» քանիցս հիշատակում է որպես իր ազգականուհու: Մեր նախկին աշխատություններում արդեն իսկ պարզել ենք, որ Հռիփսիմյան կուսանոցը Հռոմից փախել և Հայաստանում ապաստանել է իմպերատոր Դիոկղետիանոսի կողմից 296թ. հրապարակած «Ամուսնության մասին» և «Հարկերի մասին» օրենքների պատճառով: Դրանց համաձայն՝ ամուսնության հասակի հասած կինը և տղամարդը պետք է պարտադիր կերպով աշխատեին և հարկեր վճարեին: Բացի դրանից՝ կանայք և աղջիկները, անկախ իրենց ընտանեկան և ամուսնական դրությունից, պետք է պարտադիր կերպով ծննդաբերեին՝ պետությանը զինվոր տալու նկատառումներով: Այդ պայմաններից և ոչ մեկը Հռիփսիմյան կույսերը չէին կարող կատարել, ուստիև փախուստի դիմելով՝ ապաստանել էին Հայաստանում[1]: Այս հրամանագրով վերոնշված օրենքներն իրենց ուժը փաստորեն կորցրած են հայտարարվում, իսկ հռոմեական իմպերիայում բնակվող հայերն ու դաղմատացիներն ազատվել են գլխարհարկից որպես հայոց թագավորի և հռոմեական այդ իմպերատորի ազգակիցներ: Եվ դա կատարվել է կնքվող դաշնակցային պայմանագրի կապակցությամբ և հանդիսանում է դրա վավերական լինելու ապացույցներից մեկը:

Հրամանագիրն ունի նաև սանկցիա («հակառակ դեպքում»)՝ ձևակերպված հետևյալ կերպ. «Իսկ որք անհնազանդին հրամանաց մերոց, և ընդ **հարկաւ արկանեն** զեկեղեցի կամ զքահանայ, զկրօնաւոր կամ զհաւատաւոր, **հարեալ, հալածեալ լիցին երեսացն աստուծոյ և որոշեալ ի հաղորդութենէ սուրբ հաւատոյս և պատիժ պատուհասի կրեսցեն ի մերմէ թագաւորութենէս և յամենայն աթոռակալաց մերոյ**»[2]: Ինչպես դա ակնհայտ է, հրամանագիրն ապահովված է ոչ միայն պետության հարկադրանքի ուժով, ընդ որում ոչ միայն հռոմեական, այլև հայկական և այլ 24 պետությունների՝ դաշնակից ու բարեկամ հռոմեական իմպերիային, այլև եկեղեցու: Եկեղեցին իրավունք է ստանում հալածողներին զրկել հաղորդությունից և վտարել իր շարքերից (քրիստոնյա-ներին):

---

[1] **Խաչատրյան Ս. Ա.,** Հռիփսիմյան կույսերի՝ Հռոմից փախուստի դիմելու և Հայաստան գալու հարցի շուրջ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 2021, № 10, էջ 462-486, **նույնի՝** Հռիփսիմե կույսի և Տրդատ Երրորդ թագավորի ամուսնության հարցի շուրջ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 2021, № 11, էջ 456-485:

[2] Թուղթ սիրոյ և միաբանութեան մեծի կայսերն Կոստանդիանոսի և սուրբ պապին Սեղբեստրոսի…., էջ 331-363, **Շահնազարյան Կ.,** Դաշանց թղթոյ քննութիւնն ու հերքումը, 1862, էջ 23:

Այսպիսով, ակնհայտ և անկասկած է դառնում, որ այս հրամանագիրը (ինչպես նաև Կոնստանտին Մեծի ընդունած այլ քրիստոնեամետ հրամանագրերն ու գործունեությունը, այդ թվում՝ 313թ. Միլանի էդիկտը) ընդունվել է հայկական քրիստոնեական հեղափոխության, հայոց թագավորի վերոնշված համաներման և այլ հրամանագրերի ազդեցության տակ, համաձայն որոնց հայոց համընդհանրական եկեղեցին և վանականները ազատվել են հարկերից, իսկ վանականները նաև գտնվել պետության հովանավորության տակ, ապրել սեփական եկամուտների (նաև համայնքների) հաշվին և ստիպված չեն եղել ֆիզիկական աշխատանք կատարել՝ ապրուստ հայթայթելու համար: Ակնհայտ է դառնում նաև, որ համաներման այս հրամանագիրը նույնպես տիրապետում է նորմատիվ ակտին բնորոշ ներքին նորմատիվային կառուցվածքի, և այն կատարյալ իրավական նորմատիվ ակտ է: Իսկ ինչպես դրա բովանդակությունը, այնպես էլ պատճառահետևանքային կապը հայոց թագավորի վերոնշված և այլ հրամանագրերի հետ նույնպես ապացույց է դրա և «Դաշանց թղթի» վավերական լինելու մասին:

Հայկական քրիստոնեական իրականության մեջ առկա է համաներման մասին ևս մեկ հրամանագիր: Այն հրապարակել է հայոց Արշակ Երկրորդ Արշակունի թագավորը (349/350-368թթ.): Պատմիչ Փ. Բուզանդն իր երկի չորրորդ դպրության ԺԲ գլխում դրա մասին հայտնում է հետևյալը. «Զայնու ժամանակաւ շինեաց իւր արքայն դաստակերտ մի, ի հովիտն անուանեալ ի Կոգ գաւառի: **Եւ ետ հրաման** (հրամանագիր - Ս. Խ.) ընդ ամենայն գաւառս իշխանութեան իւրոյ, և հրամայեաց կարգել քարոզ ընդ ամենայն տեղիս աշխարհացն հրապարակային իւրոյ. և ամենայն կողմանս գավառաց իւրոյ լի առնէր **հրամանաւն** արքունի, զի եթէ ոք ումեք ինչ պարտիցի, եթե ոք ուրուէ ուստեք ինչ վնասեալ իցէ, կամ ոք ումեք ինչ դատ պարտիցի, ամենեքեան եկեսցեն ի դաստակերտն շինեսցին: Եթէ արիւնահան ոք իցէ, կամ վնաս ուրուք ումեք արարեալ իցէ, կամ զկին ուրուք տարեալ իցէ, կամ պարտապան իցէ, կամ ոք զուրուք կարասի ունիցի, կամ ոք յումեքէ երկիւղած ինչ իցէ, և եկեսցէ յայն տեղի, **դատ և իրաւունք մի լիցին**: Իսկ եթե ոք ումեք ինչ պարտիցի և որում պարտիցին, եկեալ յայն տեղին՝ **առանց դատի և իրաւանց կալցին, և ի դուրս տարցեն**»[1]:

Այս ֆենոմենալ, պատմականորեն և իրավաբանորեն եզակի հրամանագիր-երևույթը երբեմն շփոթում են ապաստանի իրավունքի հետ, սակայն դա այդպես չէ: Ապաստանի իրավունքը վերաբերում է այլ երկրների քաղաքացիներին (ապաքաղաքացիներին)՝ կատարած կրոնական և քաղաքական բնույթի արարքներ, որոնց համար իրենց երկրում ենթարկվում են հետապնդումների,

[1] **Փավստոս Բուզանդ,** Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1987, էջ 168-169:

պատսպարելու հետ[1]: Հին աշխարհում գուցե այդ իրավունքից օգտվել են նաև նրանք, ովքեր արարքը կատարած են եղել քրեական պատասխանատվությունը և պատիժը բացառող հանգամանքներում, և որոնց նկատմամբ կարող էին հապճեպորեն կիրառվել պատիժներ: Բացի դրանից՝ ապաստանի իրավունքը տրվել է կոնկրետ անհատական իրավական ակտերի հիման վրա: Իսկ այս դեպքում թագավորի հրամանն (հրամանագիրը) ունի նորմատիվ և կարգավորիչ բնույթ, վերաբերում է կանխապես և անհատապես չորոշված անձանց շրջանակի: Այն ամենաիսկական, բացառիկ և ունիկալ ամնիստիայի կամ համաներման **խրախուսական** ակտ է, որի պարունակած նորմը տիրապետում է **հիպոթեզի, դիսպոզիցիայի և սանկցիայի:**

Դրա պարունակած կարգավորիչ նորմի **հիպոթեզով պայման է** դրվում տեղափոխվել հայոց թագավորի սեփական (ձեռական) տարածքում գտնվող Արշակավան քաղաք, այնտեղ բնավորվել, տուն շինել և աշխատել՝ վարելով բարեմիտ քրիստոնյայի կյանք:

Դրա պարունակած նորմի **դիսպոզիցիայում** սահմանված են կողմերի իրավունքները և պարտականությունները: Հանցագործություններ կատարած անձինք, անկախ կատարածի տեսակից ու ծանրությունից, իրավունք են ստանում ապաստանել Արշակավան քաղաքում: Նրանց վրա պարտականություն է դրվում կառուցել տուն, դաստակերտ, անժամկետ բնակվել և աշխատել այնտեղ (նաև վճարել հարկեր և տուրքեր): Որպես պարտականություն՝ խոստում է տրվում **մոռացում տալ** նրանց կատարած հանցավոր արարքներին մինչև Արշակավան տեղափոխվելը: Դրանցում նրանք հայտարարվում են անպարտ: Բացառիկ է նաև այն հանգամանքը, որ դրանով իրավունք է տրվում նաև **մոռացության** մատնել այն հանցավոր արարքները, որոնք կատարվել են հրամանագրի հրապարակումից հետո:

Նորմի պարունակած **սանկցիան** («հակառակ դեպքում») խրախուսական է: Ըստ դրա՝ Արշակավանում մշտական բնակություն հաստատած, տուն շինած (և հարկ վճարող, բարեպաշտ քրիստոնյայի կյանք վարող, հանցանքներ կատարելու ցանկությունից ձերբազատված) ամեն ոք հայտարարվում է անպարտ և ազատվում քրեական պատասխանատվությունից ու պատժից: Նրա նախկին և մինչև Արշակավան տեղափոխվելը կատարած արարքները մոռացության են տրվում: հայտարարվում է, որ նման արարքներ կատարած անձանց նկատմամբ «դատ և դատաստան» չի կատարվելու:

---

[1] Тюренкова К. А., Право убежища как международно-правовой институт // Журнал Астраханского государственного университета «Гуманитарные исследования», 2017, № 1 (61), с. 116-121.

Փ. Բուզանդը դատապարտում է այդ հրամանգրի հրապարակումը և գրում, որ դրանից հետո («Իբրև ել հրաման յարքայէն») ամեն տեղից Արշակավան են տեղափոխվել «...ամենայն **գողք և աւազակք, արիւնահանք, սպանողք, սուտք և մարդելոյզք, վնասակարք, գանձահատք, զրկողք, ստադատք, զրախոսք, գերփողք**, **յափշտակողք, ժլատք**: ...Վասն այսորիկ ամենայն մարդ հառաչելով վայէին, և ասէին ի հաւանել բանիցն իւրեանց. այս բանք ըստ այսմ օրինակի պաշտէին, առ հասարակ ամենեցուն ասելով՝ թե **իրաւունք մեռան**, և վասն այսորիկ ոչ գտանէին. Այլ թէ էր, և կորուսեալ էին, ուր և էր ջանայաք խնդրէաք գտանէաք»[1]: Եվ որ դրա հետևանքով խախտվել է օրինականությունը և իրավակարգը:

Հրամանագրի հրապարակումից անմիջապես հետո դաստակերտը վերածվել է մարդաշատ քաղաքի, դրանում բնակված ընտանիքների թիվը հասել 20000-ի[2]: Սակայն կարելի է ենթադրել, որ այնտեղ միայն հանցագործներ չեն ապաստանել, այլ նաև նախարարներից դժգոհ և ազատ ձեռնարկատիրության ձգտող մարդիկ: Թագավորն Արշակավանին տվել է քաղաքի կարգավիճակ, այնտեղ կառուցել թագավորական ապարանք և եկեղեցի: Արդյո՞ք այն ունեցել է նաև պարիսպ և միջնաբերդ, քաղաքային խորհուրդ և գանձատուն, որոնք նույնպես քաղաքի առաջնային հատկանիշներից են, պարզ չէ: Այնուհետև թագավորը ստիպել է կաթողիկոսի տեղապահ Խադ եպիսկոպոսին, որ նա օծի այնտեղ կառուցած եկեղեցին («ուղղեա սեղան եկեղեցւոջն»), որը նույնպես կարևոր հանգամանք է այն կայացած և օրինավոր բնակավայր և քաղաք ճանաչելու տեսակետից: Սակայն Խադը կտրուկ կերպով մերժել է դա անել: Դա նշանակում է, որ եկեղեցին և հոգևորականությունը, որի ձեռքում է գտնվել նաև իրավունքին օրենսդրության համապատասխանությանը հետևելու գործառույթը և օրինականության նկատմամբ հսկողությունը՝ կտրականապես դեմ է եղել համաներման նշված հրամանագրին, այն համարել հակաիրավական, իսկ դրա առաջացրած հետևանքները՝ կործանարար: Դրա համար, ըստ Փ. Բուզանդի, Խադը վտարվել է թագավորական բանակից, իսկ ըստ Մ. Խորենացու՝ նաև ենթարկվել ծեծի և քարշ տրվել: Դրանք ստորացման և պատվազրկման բնույթի պատիժներ են՝ տրվող նաև իշխանություններին չենթարկվող հանցապարտներին[3]: Ըստ Բուզանդի՝ Արշակավանի բնակիչները հանցագործ լինելու պատճա-

---

[1] **Փավստոս Բուզանդ,** Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1987, էջ 168-169:

[2] **Փավստոս Բուզանդ,** նշվ. աշխ., էջ 176-177:

[3] **Խաչատրյան Ս. Ա.,** Քարշ տալը որպես հանցագործությունների, խախտումների բացահայտման, կանխման ու նախականխման միջոց և պատժատեսակ: ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 2013, № 1, էջ 689-706:

ռով Աստծու կողմից դատապարտվել են մահվան, և մահացել ժանտախտի հետևանքով[1]:

Նույն համաներման ակտի ու դրա առաջացրած հետևանքների մասին հիշատակում է նաև 5-րդ դարի պատմիչ Մ. Խորենացին իր երկի 3-րդ հատվածի ԻԷ գլխում՝ հայտնելով հետևյալը. «Բայց Արշակն ևս **ժպրհեցաւ** առնել գործ անմտութեան: Ի թիկանց կուսէ լերանց մասեաց շինեաց ձեռակերտ, ժողով մարդկան մեղաւորաց. և **ետ հրաման**, որ ոք անկեալ անդր բնակեսցէ՝ մի լիցի ի վերայ նորա իրաւունք դատաստանի: Եւ նոյն ժամայն ծովացեալ լցաւ մարդկութեամբ հովիտն ամենայն. Քանզի աւանդառուք և պարտականք, և ծառայք և վնասակարգ, և գողք և սպանողք, և կնահանք և այլք այսպիսիք փախուցեալք անդր անկանեին, և ոչ կայր նոցա այց և խնդիր: Եվ բազում անգամ բողոքեալ նախարարացն՝ և ոչ ինչ լուաւ նոցա Արշակ. Մինչ առ Շապուհ ևս ունել նոցա բողոք: **Եվ եղև ի դառնալն Շապհոյ ի Յունաց՝** առաքեաց զմի ի սպարապետաց իւրոյ և հայ գունդ ընդդեմ նմա, եթե դեպ լինի, ունել զԱրշակ. և նա խոյս ետ ի նոցանէ զկողմամբք Կաւկասու, վրաց միաբանելով»[2]: Այսպիսով, պարսից Շապուհ Երկրորդ թագավորը, անսալով հայոց նախարարների խնդրանքին, հայկական մի գունդ է ուղարկել Հայաստան: Նրանք այնտեղ գրավել են հայոց Արշակունի թագավորների դամբարանը և գանձատուն հանդիսացող Անի ամրոցը, կողոպտել այն:

Մ. Խորենացու երկի նույն ԻԷ գլխից էլ պարզվում է՝ այդ նույն ժամանակ հայոց նախարարները Շապուհ Երկրորդի քաջալերմամբ հարձակվել են Արշակավանի վրա, գրավել այն և կոտորել Արշակավանի «վնասակար» տղամարդկանց և կանանց՝ խնայելով միայն երեխաներին, որոնց հավաքել և նրանց համար մանկատներ է կազմակերպել կաթողիկոս Ներսեսը[3]: Այսպիսով, պարզվում է, որ Արշակավանի բնակչությունը կոտորվել է ոչ թե ժանտախտից, ինչպես գրում է Բուզանդը, այլ նրան ոչնչացրել են հայոց իշխանները: Հաստատվում է նաև, որ կաթողիկոս Ներսեսը ներկա է եղել Արշակավանի ավերմանը: Սակայն հարց է մնում, թե արդյոք դա եղել է նրա կողմից Բյուզանդիայից հետ դառնալուց հետո, ինչպես գրում է Փ. Բուզանդը, թե դրանից առաջ, ինչպես գրում է Մ. Խորենացին: Ըստ վերջինի՝ նա՝ որպես դեսպան, այնտեղ է գնացել Արշակավանի դեպքերից հետո՝ Արշակ Երկրորդի նամակը իմպերատոր Վաղեսին (364-378թթ.) փոխանցելու, նրա հետ բանակցելու և խաղաղության պայմանագիր կնքելու նպատակով, բայց վերջինիս կողմից բանտարկվել և աքսորվել է: Խորենացին նշում է նաև, որ դա կատարվել է այն

---

[1] **Փավստոս Բուզանդ,** նշվ. աշխ., էջ 176, 177:

[2] **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, էջ 348-349:

[3] **Մովսես Խորենացի**, նշվ. աշխ., էջ 348-351:

ժամանակ, երբ «Շապուհը Հունաստանից հետ էր դառնում» («Եւ եղև ի դառնալն Շապհոյ ի Յունաց»)[1]: Իսկ դա նշանակում է, որ Արշակավանի կործանումն իսկապես էլ տեղի է ունեցել 363թ., երբ Շապուհ Երկրորդը, Միջագետքի Մծբին քաղաքում հռոմեացիների Հովիանոս իմպերատորի հետ կնքելով նշանավոր պայմանագիրը, որը Ա. Մարցելինոսը որակում է որպես «ամոթալի», վերադառնալիս է եղել իր երկիր: Ա. Մարցելինոսն էլ այդ պայմանագիրը ամոթալի է համարում ոչ միայն դրանով պարսիկների օգտին կատարած խոշորամասշտաբ զիջումների, այլև Հայաստանը պարսիկների դեմ անպաշտպան թողնելու համար[2]:

Այսպիսով, Արշակավանը կործանվել է ոչ թե 356-358թթ.՝ Ներսես կաթողիկոսի կողմից Բյուզանդիայից վերադառնալուց հետո, ինչպիսի պնդումներ են արվում հայոց պատմագրության մեջ[3], այլ 363թ.: Եվ միայն այդ դեպքում և դրա ավերման ժամանակ (363թ.) նրա բնակիչների թիվը կարող էր հասնել 20000 ծխի: Բացառված չէ նաև, որ Ներսես կաթողիկոսը Բյուզանդիայում է եղել բազմաթիվ անգամներ: Մանավանդ որ նա այնտեղ լրացուցիչ կրթություն է ստացած եղել և կապեր ունցել բյուզանդական եկեղեցականների հետ: Եվ նա կարող էր այնտեղ գնալ ինչպես մինչև Արշակավանի հիմնումը, այնպես էլ դրա ավերումից հետո, իբրև դեսպան իմպերատոր Վաղեսին Արշակ Երկրորդ թագավորի **նամակը** հանձնելու և նրա հետ խաղաղության և դաշնակցության շուրջ բանակցություններ վարելու համար: Իսկ այդ այցը՝ դեսպանի որակում, կարող էր և կատարվել է 364թ.՝ այդ քաղաքի կործանումից հետո, երբ Վաղեսն արդեն իմպերատոր էր իր եղբայր Վաղենտիանոսի հետ:

Վաղեսին ուղղված այդ նամակի վավերականության և ժամանակի մասին ևս հայտնվում են տարբեր կարծիքներ, և այդ առթիվ կասկածի տակ է դրվում Խորենացու՝ որպես պատմիչի, հեղինակությունը: Սակայն այն միանշանակորեն հավաստի, վավերական է, համապատասխանում է 363թ. հետո տարածաշրջանում ստեղծված պատմական իրադրությանը և արտահայտում դրանք: Հայոց թագավորն իր այդ նամակում դիմում է իմպերատոր Վաղեսին, նրան անվանում իր տիրակալ և հայտնում, որ ինքն իսկապես էլ ապստամբած է եղել հռոմեացիների դեմ, ասպատակող զորք ուղարկել «հունաց երկիր» և Շապուհին օգնել «մի փոքր գնդով»՝ հույս ունենալով, որ դրանով իր երկիրը կարող է փրկել վերջինիս սպասվելիք ագրեսիայից: Փորձելով արդարացնել իր այդ և այլ հակահռոմեական արարքներ, նա նշում է նաև, որ «ես ինքս՝ Արշակս, նրա

---

[1] **Մովսես Խորենացի**, նշվ. աշխ., էջ 354-355:

[2] Аммиан Марцеллин, Римская история, М., Ладомир, 2005, с. 347, 369-370, 389, 436-437.

[3] **Ժամկոչյան Հ.Գ.**, **Աբրահամյան Ա.Գ., Մելիք-Բախշյան Ս. Ս. և այլք,** Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, 1963, էջ 243: **Ժամկոչյան Հ.Գ.**, **Աբրահամյան Ա.Գ., Մելիք-Բախշյան Ս. Ս., Պողոսյան Ս. Պ.,** նշվ. աշխ., էջ 300:

(Շապուհ Երկրորդի) հետ չեկա՝ հավատարիմ մնալով Ձեզ, որի պատճառով նա (Շապուհ Երկրորդը) ավերեց մեր աշխարհը, մինչև անգամ մեր հայրենի գերեզմանները փորեց, ոսկորները հանեց»: Նամակի վերջում հույս է հայտնվում վերականգնելու հռոմեացիների հետ դաշինքը, որը խարխլված է եղել նրա իսկ մեղքով[1]: Սակայն Վաղեսը ոչ միայն չի ցանկացել հայոց թագավորի հետ նման պայմանագիր կնքել, այլև թույլ է տվել միջազգային հարաբերություններում մինչ այդ չտեսնված արարք. նա հրամայել է մահապատժել Բյուզանդիայում գտնվող որոշ հայ պատանդների, այդ թվում Արշակ Երկրորդի եղբորը, որոնց նա հանձնել էր հռոմեացիներին նրանց հետ դաշինք կնքելիս: Իսկ դեսպան կաթողիկոս Ներսեսին ու նրա ուղեկիցներին նա աքսորել է (գլ. ԻԹ): Ըստ երևույթին, պատանդների այդ կոտորածը նույնն է՝ նկարագրված Խորենացու կողմից իր երկի նախորդ՝ ԺԹ գլխում, ըստ որի՝ հայ պատանդների մահապատիժը իրականացված է եղել իմպերատոր Վաղենտիանոսի հրամանով: Պատանդներից փրկվել է միայն Արշակ Երկրորդի որդի, ապագա հայոց թագավոր Պապը՝ արիոսական պատրիարք Մակեդոնի միջնորդությամբ[2]: Այդ գլխում առկա է նաև իմպերատոր Վաղենտիանոսի նամակը՝ ուղղված հայոց թարգավորին, որը նույնպես լի է Արշակ Երկրորդի հասցեին արված մեղադրանքներով, որի վավերականությունը նույնպես հնարավոր չէ վիճարկել: Իսկ հռոմեական այս իմպերատորների նման վարքագիծը նույնպես ապացույց է այն բանի, որ Արշակ Երկրորդն իսկապես էլ չի մասնակցել 363թ. պարսկահռոմեական պատերազմին, թեև դա պետք է կատարեր որպես հռոմեացիների դաշնակից: Իսկ իմպե-ռատորներ Վաղենտիանոսի և Վաղեսի հակահայ կեցվածքը պայմանավորված է նրանով, որ նրանք եղել են 363թ. Միջագետքում տեղի ունեցած պատերազմի մասնակիցներ և տեսել, թե ինչպես են հռոմեական զինվորները զոհվում սովից, ծարավից ու թշնամու ձեռքով: Եվ դա նաև այն պատճառով, որ Արշակ Երկրորդի զորքն այդպես էլ նրանց օգնության չի հասել: Արշակ Երկրորդի նամակը՝ ուղղված Վաղեսին, Վաղենտիանոսի նամակը՝ ուղղված Արշակ Երկրորդին, նրանց վերաբերմունքը կաթողիկոս Ներսեսի ու հայ պատանդների նկատմամբ ապացույցներ են այն բանի, որ այդ ամենը կատարվել է 364թ.՝ Արշակավանի կործանումից հետո, երբ նրանք արդեն իսկ դարձել էին իմպերատոր:

Պետք է նշել նաև, որ Արշակ Երկրորդի վարքագիծը դավաճանական է համարվել նաև Շապուհ Երկրորդի կողմից: Իր հայր Տիրանի հետ գերի ընկնելուց և վերջինիս կուրացվելուց հետո իմպերատոր Կոնստանցիոս Երկրորդի պահանջով Արշակն ազատվել է գերությունից: Սակայն մինչ այդ, զրադաշտական արարողակարգով թագավոր օծվելով, նա հավատարմության երդում է տված եղել

[1] **Մովսես Խորենացի**, նշվ. աշխ., էջ 354-355:

[2] **Մովսես Խորենացի**, նշվ. աշխ., էջ 335-339, 352-359:

պարսիկ թագավորին, որից հետո միայն բաց է թողնվել և պատվով ուղարկվել Հայաստան: Հենց այդ պատճառով էլ 363թ. պատերազմի ժամանակ նա դրսևորել է տատանողականություն, երկբայություն, երկմտություն, որը զրադաշ-տական իրավունքով ամենածանր հանցանքներից է: Դրա արդյունքում նա մեկ անցել է պարսիկների, մեկ՝ հռոմեացիների, որի հետևանքով ձեռք է բերել երկու կողմերի ատելությունը, արհամարհանքը և անվստահությունը:

Այդ պատճառով էլ, երբ Շապուհ Երկրորդի զորքը 364թ. գենոցիդի բնույթ կրող լայնամասշտաբ հարձակում է գործել Հայաստանի վրա, հռոմեացիները հայերին չեն օգնել: Դրա հետևանքով կործանվել են բոլոր հայկական խոշոր քաղաքները՝ Տիգրանակերտը, Զարեհավանը և այլն, բայց ոչ Արշակավանը, քանի որ այն ավերված է եղել այդ հարձակումից անմիջապես առաջ և ոչ թե դրանից հետո: Ուստի այն ունեցել է ոչ թե դրական արժեքավոր նպատակ՝ կործանված քաղաքների փոխարեն կառուցել նոր քաղաք (քաղաքներ), զարկ տալ արհեստներին ու կուլտուրային, նպաստել պետական բյուջեի մեծացմանը և երկրի հարստացմանը, այլ բացասական, անարժեք: Նրա իրական նպատակը եղել է վերացնել Հայաստանի տարածքային նախարարական ֆեդերատիվ կառուցվածքը, այն վերածել կենտրոնացված ունիտար միապետության, որը պարզապես անհնար էր, քանի որ նախարարական կառուցվածքը հանդիսացել է հայկական պետականության գոյության միակ ձևը՝ դեռևս ստեղծված Հայկ Նահապետի կողմից[1]: Դա հայոց նախարարները և եկեղեցին չէին կարող թույլ տալ: Դա կնշանակեր հայոց պետականության կորուստ: Հայկ Նահապետը, հաղթելով Բելին և զբաղվելով պետական շինարարությամբ, Հայաստանը բաժա-նել է իր որդիների ու թոռների միջև, նրանց դելեգացրել լայն իրավասությունների շրջանակ և կարգել առանձին տարածքային միավորների՝ նախարարությունների ավատատերեր, ընդհուպ սեփական զորք, գահ, զինանշան, դրոշ, և այլ պետական տարբերանշաններ ունենալու իրավունքը: Ամեն մի նախարարություն բաժանված է եղել նույն տոհմին պատկանող հայկազուն իշխանությունների: Մինչև Հայկի կողմից տարածք մուտք գործելն այնտեղ գոյություն ունեցող իշխաններն ազգակցական կապեր են հաստատել Հայկազունիների հետ և մտել նրանց ազգապետության կազմ: Պետությունը վերածվել է նախարարությունների և իշխանությունների միաբանության՝ ֆեդերացիայի՝ հավատարմության երդմամբ միացած մոնարխի և իրար հետ: Նման ազգապետական տարածքային կառուցվածքը Հայաստանի կտրտված աշխարհագրական ռելեֆի պայմաններում եղել է պետության կազմակերպման ամենաօպտիմալ ձևը: Դրանով պետական իշխանությունն առավել չափով մոտեցվել է ժողովրդին՝ ապահովելով պրոգրեսի

[1] **Խաչատրյան Ս. Ա.,** Հայոց իրավունքի ու պետության ծագման պատճառների ու միջոցի մասին, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2022, № 13, էջ 526-560:

ուղիով նրա զարգացումն ու ընթացքը: Ազգակցական կապը եղել է պետության կայունության երաշխավորը: Այդ ամենի արդյունքում Հայկ Նահապետը և նրա ընտանիքի անդամները սրբացվել են:

Պետության տվյալ միապետական ձևը, նախարարական տարածքային կառուցվածքը և քաղաքական բավականին մեղմ ռեժիմը Հայկյան պետությունից հետո փոխանցվել է նաև մ.թ.ա. 6-րդ դարում կազմակերպված պարսկական զրադաշտական Աքեմենյան, հետո նաև Արշակունյաց և Սասանյան իմպերիաներին, պահպանվել հայոց Երվանդունիների, Արշակունիների, Բագրատունյաց և Կիլիկյան թագավորություններում: Ահա հենց այդ պետական տարածքային կառուցվածքի կազմաքանդմանն էլ ուղղված է եղել Արշակ Երկրորդի համաներման մասին հրամանագիրը: Այն ոչ միայն չի համապատասխանում հայկական իրավունքին և իրավական չէ, այլև քաղաքական և քաղաքակրթական տեսակետից նույնպես վնասակար է, հակասել է հայոց պետության ու ժողովրդի շահերին: Ու թեև Հ. Ռիկերտի վերոնշված անհատականացման մեթոդի դիրքերից այն կարելի է համարել ունիկալ և բացառիկ երևույթ, բայց նաև արժեքավոր չէ, այլ լիովին անարժեք:

Հայաստանին վերաբերող քննարկման ենթակա հաջորդ **համաներման ակտը** հրապարակվել է պարսից թագավոր Վաղարշ Առաջինի (484-488/491թթ.) կողմից 485թ., որի մասին պատմում է 5-րդ դարի պատմիչ Ղ. Փարպեցին: Դրանով հայոց բոլոր այն զինվորականները, իշխանները, նախարարները, գյուղացիները և հոգևորականները, որոնք ապստամբել և կռվել են Իրանի դեմ 481-484թթ., ազատվել են քրեական պատասխանատվությունից ու պատժից, հետ է վերադարձվել նրանցից բռնագրավված գույքը և ամբողջ ունեցվածքը[1]: Հայոց պատմագրության մեջ այդ **համաներման ակտի** մասին չի հիշատակվում: Դրա փոխարեն հայտնվում է, որ այդ ապստամբությունից և պատերազմից հետո հայ իշխանների ու պարսից տերության միջև Նվարսակ գյուղում պարսից թագավոր Վաղարշ Առաջինի դեսպան Վշնասպդատ Նիխորականի (Նիխորի) և հայոց ապստամբության առաջնորդ, սպարապետ Վահան Մամիկոնյանի միջև հաշտության պայմանագիր է կնքվել, որով էլ ավարտվել է ապստամբությունը: Դրա ուժով Հայաստանը կրկին վերադարձել է Իրանի կազմ՝ որպես դրա կառուցվածքային սուբյեկտներից մեկը[2]:

---

[1] **Ղազար Փարպեցի,** Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ. հրատ., 1982, էջ 386-427:

[2] Հայ ժողովրդի պատմություն, ութ հատորից, հ. 2, ՀՀ ԳԱ հրատ., Երևան, 1971, էջ 198-208, **Ժամկոչյան Հ. Գ., Աբրահամյան Ա.Գ., Մելիք-Բախշյան Ս. Տ. և այլք,** Հայ ժողովրդի պատմություն, Չորս հատորից, Հ. 1, Երևան, «Հայպետուսմանկհրատ», 1963, էջ 338-349, **Ժամկոչյան Հ. Գ., Աբրահամյան Ա.Գ., Մելիք-Բախշյան Ստ. և այլք,** Հայ ժողովրդի պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1975, էջ 285-298, Հայոց պատմություն, խմբ. **Հր. Սիմոնյանի,** Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 83-84:

Այնինչ դա այդպես չէ, Նվարսակում նման պայմանագիր չի կնքվել, այլ միայն շարունակել է քննարկվել մինչ Նվարսակում այդ հանդիպումը հայոց նախարարների և աշխարհաժողովի քննարկմանը ներկայացված պարսիկ թագավոր Վաղարշ Առաջինի նշված հրովարտակի նախագիծը: Այն ուղարկել է զորքով Հայաստան մտած Նիխորը, իսկ Դվին բերել և հայոց նախարարներին հանձնել Իրանի թագավորներին կից ատյանի կամ «Խորհրդի դպիր Շապուհը և այդ խորհրդի անդամ Ճվարշացի Միհր-Վշնասպը», որը ներկայացնում էր ինչպես պարսիկ թագավորին, այնպես էլ նրան կից ազգականների ու իմաստունների (կանխագուշակների, մոգերի)՝ «թագավորներ դնող» խորհրդին կամ ատյանին: Իսկ դա նշանակում է, որ թագավորի հրովարտակի նախագիծն արտահայտել է նաև այդ խորհրդի որոշումը և կամքը. Խորհուրդ կամ ատյան, որը ոչ վաղ անցյալում մերժել էր թագավոր նշանակել հեփթաղների դեմ պատերազմում զոհված Պերոզ թագավորի որդի Զարեհին, և թագավոր էր նշանակել Պերոզի հորեղբայր Վաղարշ Առաջինին՝ ապստամբ հայ նախարարների հետ հաշտություն կնքելու նախաձեռնողին: Պետք է նշել, որ Իրանի այդ ատյանը գործել է՝ սկսած Սպիտակ Սպիտամա Զորոաստրի և Աքեմենյան առաջին թագավորների ժամանակներից: Եվ նա է թագավորական դինաստիայի անդամներից ընտրել և թագավոր նշանակել ամենախելոքին, քաջին և իմաստունին (և ոչ թե թագավորի ավագ որդուն կամ որևէ որդուն՝ ըստ ժառանգական իրավունքի): Ղ. Փարպեցու այս հիշատակությունից պարզվում է նաև, որ նշված ատյանն ունեցել է իր որոշումները սղագրող և գրառող դպիր՝ հանձին դեսպան-դպիր Շապուհի: Այդ կարևոր փաստը վկայված չէ պարսկական ատյանի մասին առաջինը պատմող Ստրաբոնի կողմից: Դրանից տեղյակ չէ նաև Թ. Մոմզենը[1]:

Վահան Մամիկոնյանը, ծանոթանալով **համաներման մասին հրովարտակի նախագծի բովանդակությանը,** իր մոտ է հավաքել «զամենայն հաւատարիմ ուխտապահացն գունդ, զնախարարս և զազատս և զամենայն այրուձիոյ» և հրամայել պատգամաբերներին նրանց առջև նույնպես կարդալ «զբանս թագավորին Վաղարշու և զբանս ամենայն արեաց աւագանւոյն»[2]: Ակնհայտ է, որ այդ կապակցությամբ հրավիրվել է աշխարհաժողով, որում կարդացվել և քննարկվել են հրամանագրում առկա թագավորական առաջարկները, ընդունվել որոշումներ, որոնք հաջորդ օրը ներկայացվել են Նիխորի ուղարկած «արքունիքի ավագանուն»: Դրանք են՝ 1. Հայոց բնիկ (քրիստոնեական) օրենքները «մեզ թողնել», այն է՝ հայոց նկատմամբ չկիրառել զրադաշտական իրավունքի նորմերը, ոչ մի հայ մարդու մոգ (զրադաշտական)

---

[1] Страбон, География в 17 книгах, М., Наука, 1964, с. 487; Моммзен Теодор, История Рима, Ростов на Дону, Феникс, т. 4, 1997, с. 254-255.

[2] **Ղազար Փարպեցի,** նշվ. աշխ., էջ 386-427:

չդարձնել, մոգության ընդունման համար ոչ ոքի գահ ու պատիվ չտալ, հայոց աշխարհից հեռացնել կրակարանները, քրիստոնեական եկեղեցին և հոգևորականներին չհետապնդել և քրիստոնեական իրավական սիստեմի նորմերի գործողությունն այլևս չխաթարել: 2. Հայ իշխաններին և նախարարներին ճանաչել ոչ թե զանազան ոչ արհեստավարժ և ոչ օբյեկտիվ պաշտոնյաների կամ զրպարտիչների կարծիքների միջոցով, այլ անմիջականորեն հայ նախարարների ու հայոց ղեկավարության հետ անձամբ հաղորդակցվելով և անձամբ ջոկելով լավը վատից, պիտանին՝ անպիտանից, տոհմիկին՝ անտոհմիկից, իսկ անմիտներին «հալածել հրապարակից»: Համաներման կամ մոռացության («**մոռանալ ու դեն ձգել**») հրամանագրով նախատեսվում են նաև փոփոխություններ «**Գահնամակ**»-ում և «**Զորանամակ**»-ում՝ ըստ նախարարությունների ու նախարարների վաստակի և ըստ արժանավորության սկզբունքի: Դա նշանակում է, որ ուխտատեր իշխանները և նախարարները նաև զրկված են եղել այդ սահմանադրական օրենքներում իրենց զբաղեցրած տեղից, աստիճանից, գահից, թագից ու պատվից: Եվ նրանց տեղերն այդ սահմանադրական օրենքներում, կոչումները, պատվանշանները, ինչպես նաև հողատիրույթները, գույքը, քաղաքներն ու ամրոցները, որոնք նրանցից խլված և տրված են եղել հավատափոխ նախարարների ու իշխանների, պահանջվում է վերադարձնել: 3. Երրորդ պահանջն է ապստամբությամբ պատճառված վնասների, հայերի կողմից կատարած արարքների (որոնք պարսկական տեսակետից ռազմական հանցագործություններ էին) ոչ հանցավոր լինելու ճանաչում, դրանց **մոռացում**, ներքին ինքնավարության, Հայաստանի նախարարական-պետական կառուցվածքի և քաղաքական ռեժիմի, «Գահնամակ»-ով և «Զորանամակ»-ով սահմանված կարգի և աստիճանակարգվածության խստիվ պահպանում: Դա նաև չի նշանակում հավատափոխ եղած և պատերազմի ժամանակ պարսիկների կողմն անցած նախարարների անունների հանում «**Գահնամակ**» և «**Զորանամակ**» սահմանադրական օրենքներից, այլ միայն նրանց անունների տեղափոխում այն տեղեր, որոնցում դրանք եղել են մինչև ապստամբությունը: Գոյություն ունի նաև **չորրորդ պահանջ**, որը որպես այդպիսին ձևակերպված չէ, բայց քանիցս բարձրաձայնվում է. գրավոր ու կնքված հրովարտակի հրապարակում և անձամբ հայոց նախարարներին դրա հանձնում: Դրանց դիմաց հայոց աշխարհաժողովը պարտավորություն է ստանձնում մտնել պարսկական կոնֆեդերացիայի մեջ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով հանդերձ:

Հրապարակելով այդ պահանջները՝ Վ. Մամիկոնյանը Նիխորին ուղղված նամակում (ուղերձում) իր խոսքն ամփոփում է հետևյալ կերպ. «Արդ, եթե կարող եք սրանք այսպես խոստանալ և խոստացածներն էլ **գրով և կնիքով հաստատած տալ մեզ,** ապա կանչի՛ր, և մենք հոժարակամ կգանք, կլսենք ձեր խոսքերը և

կինազանդվենք թագավորի հրամանին, ինչ էլ որ այն ասի»: Դրանց չընդունման դեպքում «պատրաստ կլինենք մեռնել, բայց արյաց հպատակվել չենք կարող», - ասում է սպարապետը[1]:

Պատմիչ Ղ. Փարպեցին հայտնում է, որ պարսիկ զորավար և ավագ դեսպան Նիխորը, ստանալով հայոց սպարապետի ուղերձը, նամակով նրան հրավիրել է իր մոտ՝ **համաներման հրովարտակի նախագծի շուրջ** քննարկումները շարունակելու համար: Կարելի է կարծել, որ մինչ այդ նա հայոց պահանջները ուղարկած է եղել արքունիք և դրանց շուրջ լրացուցիչ հրահանգներ ստացել, այն է՝ ամեն ինչ անել՝ հայերին «արեաց ծառայության տակ» դնելու համար: Իր նամակում Նիխորը հայոց ուխտապահ նախարարներին, իշխաններին և զինվորականությանը ապստամբության մեջ ճանաչում է անմեղ, նրանց ապստամբական մտքերը, խոսքերը և գործերը[2]՝ բարի՝ կատարված ծայրահեղ անհրաժեշտության կամ անհրաժեշտ պաշտպանության սահմաններում, Պերոզ թագավորի կողմից հայերի նկատմամբ կիրառած անսահման բռնությունից դրդված: Հայտնվում է նաև, որ «Արյաց տերն ու արյաց ամբողջ ավագանին ուխտել են նրա ներկայացրած պահանջները նախատեսել հրովարտակով, շնորհել «լիով և կատարել»[3]: Դրա միակ պայմանը Հայաստանի՝ Իրանի կազմ վերադարձնելն է:

Ղ. Փարպեցու երկի մի ընդարձակ հատված (գլ. գլ. ՂԱ-ՂԴ) նվիրված է Նվարսակում Վահան Մամիկոնյանի և Նիխոր նախարարի հանդիպմանը և նրանց բանակցություններին[4]: Այն կայացել է հրապարակում արևին դիմավորելու ծեսի ժամանակ, որտեղ զորավարները գրկախառնվել և ողջունել են միմյանց երկու բանակների ցնծագին բացականչությունների տակ: Նույն տեղում գումարվել է համատեղ ատյան: Դրանում ճառով ելույթ է ունեցել Նիխորը և կրկին հաստատել, որ հայերն ապստամբել են «ամբարտավան» Պերոզ թագավորի բռնությունների ու դաժանության հետևանքով: Վ. Մամիկոնյանին նա ասում է նաև. «**Եթե** դու համաձայնես հաշտության գալ և ընդունես քո բնիկ նախնիների տիրոջ հպատակությունը, և **ինչ վատ բան եղել է մեր ու ձեր միջև**, **մոռանաս ու դեն ձգես,** և այս գործն էլ անես իմ միջնորդությամբ, ապա դու այստեղ՝ Հայաստանում կմնաս, **մինչև որ թագավորը (հրովարտակը) կնքի և ուղարկի**

---

[1] **Ղազար Փարպեցի,** նշվ. աշխ., էջ 392-393:

[2] **Ղազար Փարպեցի,** նշվ. աշխ., էջ 386-387, **Խաչատրյան Ս. Ա.,** «Երեք չափերի» սկզբունքները «Հաճախապատում ճառք» -ում, ՊԲՀ, 2013, № 2, էջ 234-254:

[3] **Ղազար Փարպեցի,** նշվ. աշխ., էջ 394-397:

[4] **Ղազար Փարպեցի,** նշվ. աշխ., էջ 396-415:

քեզ: Եվ հետո բարով կգաս արյաց տիրոջ մոտ, **ամենայն բարի և արժանի բաներ քեզ և ում ինքդ կամենաս՝ կտա սիրով ու կամովին»**[1]:

Այսպիսով, ևս մեկ անգամ հաստատվում է, որ Նվարսակում տեղի ունեցող բանակցությունների արդյունքում ոչ թե խաղաղության պայմանագիր է կնքվել, այլ քննարկվել են պարսիկ արքայի համաներման հրամանագրի նախագիծը, հայոց պահանջները և դրանց հիման վրա առաջիկայում թագավորի կողմից հրապարակվելիք **մոռացման** (համաներման) հրամանագրի պայմանները: Դրանք են՝ Հայաստանի վերադարձ Իրանի կոնֆեդերացիայի կազմ՝ սատրապության ձևով ու կարգավիճակով, «բնիկ նախնիների տիրոջը հպատակվելու» պարտականության ընդունում՝ իր բոլոր հետևանքներով հանդերձ (հարկերի հավաքում և վճարում, զորքով ծառայություն և այլն: Դրա փոխարեն Հայաստանին տրվում է ներքին ինքնավարություն, պահպանվում են նախարարական-իշխանական տարածքային կառուցվածքը և նախարարների ու իշխանների ավատական իրավունքները: Բացի դրանից՝ հայոց նախարարները իրավունք են ձեռք բերում առնչվել թագավորին առանց միջնորդների և անմիջականորեն (փաստորեն, ինչպես 7 պարսիկները Դարեհ Առաջինի ժամանակ): Նորից հաստատվում է, որ թագավորական համապատասխան հրամանագիրը լինելու է պատշաճ ձևով կազմված և կնքված (գլ. ՂԳ): Նվարսակի հանդիպումից և բանակցություններից պարզվում է նաև, որ երեք (իրականում՝ չորս) պայմանները՝ առաջադրված հայոց աշխարհաժողովի կողմից, ընդամենը խոստացված և դեռևս վերջնականորեն տրված չեն եղել: Եվ որ Վ. Մամիկոնյանը ակնկալում է դրանք ստանալ անձամբ թագավորից և նրան կից ատյանից նրանց հետ հրապարակային հանդիպման ժամանակ:

Նիխորը, թագավորի անունից խոստանալով նշված պահանջների բավարարում, նաև ընթացիկ նախապայման է դրել (գլ. ՂԴ). հայոց այրուձին պետք է արշավի ապստամբած և իրեն թագավոր հայտարարած Պերոզի որդի Զարեհի դեմ, ճնշի ապստամբությունը, որից հետո միայն կարող է հանդիպել թագավորի հետ և նրանից ստանալ **գրավոր ու կնիքված հրամանագիրը մոռացության կամ համաներման, կամ ամնիստիայի** մասին[2]:

Նվարսակից Դվին վերադառնալուց հետո Վ. Մամիկոնյանը հայոց այրուձին ուղարկել է Զարեհի դեմ: Վերջինս պարտվել, գերեվարվել և հանձնվել է պարսկական իշխանություններին, որոնք նրան դատապարտել են մահվան և մաշկազերծել: Դրանից անմիջապես հետո էլ կայացել է Վ. Մամիկոնյանի և հայոց նախարարների հանդիպումը պարսից թագավորի և «ամենայն արյաց ավագանու» հետ: Ատյանի մեծ դահլիճում նախ ելույթ ե ունեցել թագավոր

---

[1] **Ղազար Փարպեցի,** Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ. հրատ., 1982, էջ 404-405:

[2] **Ղազար Փարպեցի,** նշվ. աշխ., էջ 414-417:

Վաղարշը և հայտնել, որ ինքը ստացել է Վ. Մամիկոնյանի կողմից Նիխորին ներկայացված պայմանները: Համաձայնելով դրանց հետ՝ նա հայտարարել է նաև, որ դատապարտում է նախկին թագավոր Պերոզի «անմիտ ամբարտավանությունը», նրա բռնությունները հայերի նկատմամբ, որի հետևանքով հայ իշխանները, նախարարներն ու զորքը ստիպված ապստամբել են և դրդված ծայրահեղ անհրաժեշտությունից՝ դիմել անհրաժեշտ պաշտպանության: Նա նաև հաստատել է, որ «...զամենայն զոր ինչ խորեալ է ձեր և իմացեալ, և խոսեցաւ առաջի մեր ձեր Վահան, **տուեալ եղցի ձեզ մեր գրով և կնիքով** զամենայն խնդիրդ ձեր այսօր մինչև ցհաւիտեանս: **Եւ զգործս ապստամբութեանդ,** զոր ի բռնութէն Պերոզի, և ոչ ի ձեր կամաց գործեցէք՝ **թողեալ լիցի ձեզ այսօր,** և մի ոք իշխեսցէ ի թագավորաց որ զայս գահ ունին, և կամ արի այր՝ **յիշել այդ կամ առանձինն յիւրեանց խոսս և կամ առաջի առն հայոց յայսմ հետէ մինչև հավիտեան: Բայց դուք հպատակութիւն զոր արժան է ծառայից առ տեարս առնել՝ հատուցէ՛ք առ մեզ լիով և կատարեցէք**»: Եվ որ **«օրենք մեր չհրամայեն»** այլ կերպ վարվել[1]:

Այսպիսով, հայ իշխանների, ամբողջ զորքի և ապստամբության բոլոր մասնակիցների արարքները անձամբ թագավորի կողմից և ատյանի համաձայնությամբ հայտարարվում են հանցակազմ չպարունակող, դրա հետ մեկտեղ բոլորին՝ մասնակցած այդ ապստամբությանը, թողություն է տրվում կամ համաներում հայտարարվում: Բոլորից պահանջվում է այդ ապստամբության ժամանակ տեղի ունեցած արարքների **մասին չհիշել,** և դրանք **մոռացության** են մատնվում «մինչև հավիտյան»: Պետք է նշել նաև, որ պարսկական արքունիքին դա ամեն տեսակետից ձեռնտու էր, քանզի այդ ակտով համաներում էր հայտարարվում նաև այն նախարարներին ու պարսկական իշխանություններին ու զորքին, ովքեր Հայաստանին պատճառել էին հսկայական վնասներ: Դրանից պարզվում է նաև, որ պարսկական զրադաշտական իրավունքում գործել են անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտները, որոնց գործողությունը տվյալ դեպքում տարածվել է նաև անորոշ քանակի և նախապես չորոշված հայ ապստամբների, նախարարների և նրանց հակառակորդների վրա: Սակայն հարցը, թե համաներումը բնորո՞շ է արդյոք զրադաշտական իրավունքին, մնում է բաց:

Համաներման մասին հրամանագիրն իսկապես էլ տրվել է գրավոր ձևով, կնիքված, և այն կարդացվել է հայոց եկեղեցիներում ու հրապարակներում: Այն իր ձևով կատարյալ է՝ պարունակելով նորմատիվ ակտին և նրա պարունակած նորմի ներքին տրամաբանական կառուցվածքին բնորոշ հիպոթեզ, դիսպոզիցիա և

---

[1] **Ղազար Փարպեցի,** նշվ. աշխ., էջ 418-419, 422-425:

սանկցիա: Դրա կոնկրետ **հիպոթեզը կամ պայմանը** («եթե»), որի գոյությամբ (կամ բացակայությամբ) պայմանավորված՝ կարող է ծագել կողմերի իրավունքների ու պարտականությունների շրջանակ[1]. դա հայկական մարզպանության անվերապահ վերադարձն է իրանական կոնֆեդերացիայի կազմ («Բայց դուք հպատակութիւն զոր արժան է ծառայից առ տեարս առնել՝ հատուցէ՛ք առ մեզ լիով և կատարեցէք»): Պայման, որն առկա է Վաղարշ թագավորի ներման հրամանագրի նախագծում, դեսպան Նիխորի տված խոստումներում ու պահանջներում և կրկնվում է բուն համաներման մասին հրամանագրում՝ ներկայացված անձամբ Վաղարշ թագավորի կողմից: Հիպոթեզային պայմաններից են նաև հայկական պահանջները՝ համաձուլված դրա դիսպոզիցիային: Նման պայման է նաև ոչ միայն պարսկական իշխանությունների կողմից **այդ ամենի մոռացումը,** այլև հայերի կողմից:

Նորմի **դիսպոզիցիան** («ապա») այն է, որ վերոնշված պայմանները բավարարելու դեպքում ապստամբությանը մասնակցած հայոց նախարարներին, նրանց զորքի զինվորներին, հոգևորականներին ու գյուղացիներին վերադարձվում են նրանց իրավունքները, նրանց կատարած արարքները մոռացության են տրվում, հայտարարվում միայն արտաքին կողմից և միայն ձևականորեն հանցավոր՝ կատարված անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության սահմաններում՝ ի պատասխան Պերոզ թագավորի բռնի և անօրինական գործողությունների, մտքերի ու խոսքերի: Մոռացության են տրվում նրանց կատարած արարքները, վերադարձվում նրանց բոլոր գույքային իրավունքները, բռնազավթած գույքը, իշխանական-նախարարական կոչումները, դիրքը, պատիվները և չեղարկվում ծանր հարկերը: Հայ նախարարները օրինավոր ծառայության դիմաց իրավունք են ստանում անմիջականորեն, առանց որևէ միջնորդ ապարատի հարաբերվել պարսիկ թագավորի հետ: Դա երաշխավորություն է այն բանի, որ նրանց ու նրանց հպատակների հետ վարվելու են արդարությամբ: Նրանց վրա դրվում է պարտականությունների նոր շրջանակ: Հայ նախարարները և զինվորականությունը պարտավորվում են հպատակվել պարսկական իշխանություններին, ծառայել բանակում: Ենթադրվում է նաև, որ բոլորը պարտավորվում են հարկեր վճարել: Վ. Մամիկոնյանը դա կոչում է «օգուտ զարդարամտութիւն», իսկ Վաղարշ թագավորը Վ. Մամիկոնյանին առաջարկում է լինել նաև «աշխարհաշեն»: Հայոց եկեղեցին ճանաչվում է լեգիտիմ և անհարկ, ազատվում հարկեր վճարելու պարտականությունից, վերականգնվում է նրա

[1] Теория государства и права. Под ред. Корельского В. и Перевалова В. М., 1997, с.2 80-285; Алексеев С. Право: Опыт комплексного исследования, М., 1999, с. 65-66; Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. М., 1998, с. 221-226; Нерсесянц В. С., Общая теория права и государства, М., 1999, с. 394-396.

կողմից հավաքվող տասանորդ կոչվող հարկը և պտղին հավաքելու իրավունքը: Վերացվում է գլխահարկը: Դրանց մասին ուղղակի վկայություն Փարպեցու երկում չկա, բայց նշված հանգամանքն ակնհայտ է դառնում այն բանից, որ հայոց կաթողիկոս Հ. Մանդակունին նույնպես շատ գոհ է եղել բանակցությունների արդյունքներից՝ հայտարարելով՝ «Կայսրինը տվե՛ք կայսրին և Աստծունը՝ Աստծուն»[1]:

Ակնհայտ է դառնում նաև, որ «**Գահնամակ**» և «**Զորանամակ**» սահմանադրական օրենքներում, ինչպես պարզվում է Ղ. Փարպեցու հետագա շարադրանքից (գլ. ՂԶ), ի վնաս ապստամբ նախարարների կատարված փոփոխությունները թագավորի այս հրամանագրով շտկվել, դրանցում առկա նախարարական ցուցակները վերակազմվել, ճշտվել են: Մասնավորապես «**Գահնամակ**»-ում մտցվել են հետևյալ փոփոխությունները. 1. Մամիկոնյանների տոհմը դրանում վերականգնվել է, իսկ Վահան Մամիկոնյանը նշանակվել այդ տոհմի նախարարի պաշտոնում, «բազմեցվել Մամիկոնյանների տերության գահին»: Նա նաև նշանակվել է հայոց բոլոր զորքերի սպարապետ: Իսկ դա նշանակում է, որ փոփոխություններ են կատարվել նաև «**Զորանամակ**»-ում: 2 Ապստամբությանը մասնակցած բոլոր «ուխտապահ նախարարներին ևս շնորհվել են, ինչ որ պատշաճ է ըստ իր արժանավորության»: Դա նշանակում է, որ նրանց նախարարական տոհմերը ևս վերականգնվել են «**Գահնամակ**»-ում և «**Զորանամակ**»-ում՝ ըստ նրանց արժանավորության չափի: Միևնույն ժամանակ, Վ. Մամիկոնյանի խնդրանքով, հայ նախարարների շարք է մտցվել նաև Կամսարական նախարարությունը և նախարարը: Իսկ Արծրունյաց նախարարին թագավորը հրաժարվել է ներառել համացուցակում («Գահնամակ»-ում), «մինչև որ այդ տոհմի մարդիկ ցույց տան որևէ արժանավոր ծառայություն»: Եվ միայն այդ դեպքում նրանց նկատմամբ կկիրառվի **«ըստ արժանավորության»** սկզբունքը[2]: Հասկանալի է դառնում նաև, որ «Գահնամակ» և «Զորանամակ» կոչվող օրենքների վարումը գտնվել է պարսիկ թագավորի ձեռքում:

Համաներման հրամանագրի պարունակած նորմի սանկցիայով («հակառակ դեպքում») նախատեսվում է հայ ապստամբների կողմից կատարած արարքների **լիակատար մոռացում,** սահմանվում է դրանց **հիշատակման արգելք**: Արգելվում է նաև երբևիցե քննարկել այն հարցը՝ դրանք եղել են հանցանքներ, թե ոչ: Հասկանալի է, որ նման արգելքի խախտումը հանգեցրել է նաև պատիժների, ընդ որում՝ խիստ, որը ենթադրվում է:

Զրադաշտական իրականության մեջ համաներման մասին իրավական ակտ՝ նաև հայ ժողովրդին վերաբերող, հրապարակվել է 7-րդ դարում: Դրա

---

[1] **Ղազար Փարպեցի,** նշվ. աշխ., էջ 426-427, 436-437:

[2] **Ղազար Փարպեցի,** նշվ. աշխ., էջ 426-427:

մասին «հաստատապես» պատմում է հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացին: Իր երկի 2-րդ գրքի ԺԳ գլխում նա հայտնում է, որ պարսիկ արքա Խոսրովի որդի Կավատի դաստիարակը, «մահվան թակարդի մեջ ներփակելով ահեղ որսորդ, արևելքի առյուծ» Խոսրովին և «բոլորի համակրանքը շահելու» միջոցով կատարելով պալատական հեղաշրջում, իր սան, Խոսրով թագավորի որդի Կավատին թագադրել է: Եվ որ նոր թագավորի «երջանիկ» թագադրման մասին շրջել և բարձրաձայնել են Տիզբոնի մոտ գտնվող Վեհարտաշիր քաղաքի պահապանները և մունետիկները: Այնուհետև, ըստ Կաղանկատվացու, նոր թագավորի հրամանով «բաց արին Անհուշ բերդի դռները, համարձակ դուրս կանչեցին արքայի բոլոր կալանավորներին, որոնք հույժ անթիվ բազմությամբ ներկալված էին մահվան ստվերների մեջ երկար ժամանակներից ի վեր: Նրանց ասում էր նաև. «Խոսրովի կողմից դաղված թշվառականներ, **եկեք, դուրս եկեք,** որովհետև նորընծա թագավորի, նրա որդի Կավատի ձեռքով **ձեզ համար կյանքի դռներ բացվեցին**: **Եվ ահա յուրաքանչյուրը, փշրելով իր շղթաները, միատեղ դիմեց դուրս՝ «անարգելով Խոսրովին**», ով այդ ժամանակ բանտարկված էր իր պալատում: Լսելով աղմուկը՝ Խոսրովը հարցրել է , թե ինչ է կատարվում: Նրան հայտնել են, որ «քո որդի ավատն է քո փոխարեն թագավորել…: **Նաև ազատեց մեծ բանտի բոլոր կալանավորներին, որոնք բանտարկված էին քո հրամանով, բոլորը ցնծալով օրհնում են նրան՝ արքա անվանելով**»: Լսելով «աղետավոր գույժը, մանավանդ **կալանավորների ազատումը**, վերջինս սկսել է հառաչել, վայ տալ, վարանքի մեջ ընկնել»: Այնուհետև նրան տեղափոխել են մեկ այլ ապարանք, որը կոչվում էր Հնդուկան Մարասպանդ, և գլխատել: Այդ ելքը սահմանված է եղել բանդագուշակությամբ[1]:

Նույն գլխում Մ. Կաղանկատվացին հայտնում է նաև, որ իր ծնող Խոսրով թագավորին մահապատժելուց հետո նոր թագավոր Կավատը իր «**եղբայրներին ոտքերից ու ձեռքերից խեղանդամ դարձրեց՝ կամենալով նրանց կյանք շնորհել, բայց շատերի ամբաստանության հետևանքով նրանք ևս սրով սպանվեցին**»: **«Լինելով խոհեմ ու բարեսիրտ՝ նա հաշտություն առաջարկեց իր ժամանակակից թագավորներին: Այն բոլոր կալանավորներին, որոնք գտնվում էին իր հոր պալատի բանտում, ուղարկեց յուրաքանչյուրին իր տեղը: Հրովարտակներ գրեց իր թագավորության բոլոր սահմաններում, որ ամենքը ցնծությամբ և ուրախությամբ ապրեն. արքունական բոլոր հարկերն ու մաքսերը իր տերության բոլոր վայրերում երեքամյա ժամկետով զիջեց ամենքին:** Ջանք էր թափում նաև այնպես անել, որ ոչ ոք իր թագավորության ընթացքում սուր չկապի վրան»: «Բայց նրա թագավորությունը տևեց ընդամենը

[1] **Մովսես Կաղանկատվացի,** Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, «Հայաստան», 1969, էջ 112-114:

յոթ ամիս, և այդ հայրասպանը գնաց միացավ իր նախնիներին, որովհետև պետք է թագավորությունը վերանար Սասանյան տանից և հանձնվեր Իսմաիլի սերունդների ձեռքը»[1]:

Կաղանկատվացու երկի հաջորդ՝ ԺԴ գլխից էլ պարզվում է, որ այդ նույն **համաներման** ակտով բանտից ազատվել է նաև Աղվանից (Աղվանք սատրապության) կաթողիկոս Վիրոն, որը Տիզբոնի մի պալատում բանտարկված էր եղել 25 տարի: Դրանից հետո նա վերադարձել է Աղվանք, որը զուգադիպել է այնտեղ կատարված խազարական արշավանքի հետ[2]: Հայտնի է, որ այդ դեպքը կատարվել է 628թ.: Հետևաբար խոսքը պարսից թագավոր Խոսրով-Կավատ Փարվեզ Երկրորդին (591-628թթ.) մահապատժելու մասին է, որի մայրը եղել է հայուհի Մարիան՝ բյուզանդական իմպերատոր Մավրիկիոսի դուստրը: Իսկ նրան բանտարկել, մահապատժել, իրեն թագավոր հայտարարել և համաներման ակտ է հրապարակել նրա որդին, որի անունը, ըստ Կաղանկատվացու, նույնպես եղել է Կավատ: Այդ տեղեկությունը ճշմարիտ է: Նա Իրանի թագավոր Կավատ կամ Կոբադ Շիրոյեն (Շիրույե) է՝ թագավորած 628թ. և մահացած (սպանված) նույն տարում:

Այսպիսով, Կաղանկատվացին հայտնում է զրադաշտական Իրանում տեղի ունեցած հեղաշրջման, այն իրականացրած թագավորի կողմից հրապարակած բացառիկ, ունիկալ, եզակի և համընդհանրական բնույթ ունեցող համաներման հրամանագրի մասին և հայտնում դրա բովանդակության մանրամասները: Նրա երկի հրատարակիչները և մեկնաբանները այդ հրամանագրին և դրան հաջորդած դեպքերին որևէ ուշադրություն չեն դարձրել: Չի էլ պարզվել, թե արդյոք հեղաշրջում իրականացրած Խոսրով-Կավատ Փարվեզ Երկրորդի և նրան սպանած ու թագավորած որդու անունը իսկապե՞ս եղել է Կավատ Շիրոյե, թե՞ ոչ, ե՞րբ է նա թագավորել, համաներման հրամանագիր արձակե՞լ է, թե՞ ոչ: Մինչդեռ Կաղանկատվացու հայտնած տեղեկությունները այս ամենի մասին հավաստի են և ճիշտ, ապացուցվում են նաև Ֆիրդոուսիի հայտնած տեղեկություններով[3]: Վերջինս գրում է, որ Իրանի թագավորներին կից ատյանի աջակցությամբ Խոսրով Կավադ Փարվեզ Երկրորդին գահազրկել, մահապատժի է ենթարկել և թագավորել է նրա ավագ որդի Կոբադ Շիրոյեն՝ թագավորած ընդամենը յոթ ամիս (628թ. մարտից մինչև հոկտեմբեր): Նա անմիջապես իրեն կից ատյանի պահանջով հրապարակել է համաներման հրամանագիր, որի հիման վրա բանտերից ազատ արձակել բոլոր կալանավորներին, որոնց մեջ մինչև հեղաշրջումը եղել են նաև Կոբադ Շիրոյեն և նրա 15 եղբայրները: Այն մասին, որ

---

[1] **Մովսես Կաղանկատվացի,** նշվ. աշխ., էջ 114:

[2] **Մովսես Կաղանկատվացի,** նշվ. աշխ., էջ 115-126:

[3] Фирдоуси. Шахнаме, Серия "Литературные памятники, М., изд. АН СССР, т. 6, 1989, **с.** 491-528:

թագավորի 15 որդիները, բացի մեկից (թագուհի Շիրինի որդուց), որին Խոսրով-Կավադ Փարվեզ Երկրորդը գահաժառանգ էր ընտրել, նույնպես բանտարկված են եղել, հայտնում է Ֆիրդոուսին, իսկ Կաղանկատվացին այդ մասին լռում է: Կարելի է ենթադրել, որ պալատական հեղաշրջումը հիմքեր ունեցել է: Բանն այն է, որ Խոսրով-Կավատ Փարվեզ Երկրորդ թագավորն իրավունք չուներ որևէ որդու թագաժառանգ ընտրել: Ըստ զրադաշտական իրավունքի՝ դա անում էր թագավորին կից ազգականների ու իմաստունների խորհուրդը (ատյանը) թագավորի առաջադրմամբ, որի մասին արդեն իսկ ասվել է: Իսկ ատյանը դժգոհ է եղել ինչպես թագավորի կողմից թագաժառանգի ընտրությունից և նրա 15 որդիների (և այլ պետական և եկեղեցական գործիչների) անժամկետ և անօրինական բանտարկությունից, այնպես էլ նրա վարած խիստ հարկային քաղաքականությունից, որից տուժել են նաև հենց ատյանի անդամները:

Ֆիրդոուսին հայտնում է, որ թագավոր հռչակված Կոբադ (Կավատ) Շիրոյեն գահընկեց արված և բանտարկված հոր մոտ է ուղարկել երկու իմաստուն դեսպանների ու նրանց միջոցով հայտնել, որ ոչ թե ինքն է հեղաշրջումը կազմակերպել, այլ ատյանը: Ի պատասխան դրա՝ գահազուրկ հայրը դատապարտել է հեղաշրջումը, ինչպես նաև նրա հրապարակած **համաներման հրամանագիրը,** դրանով բանտերում գտնվող անձանց ազատելու, և հարկերը երեք տարով զիջելու հանգամանքները՝ ասելով հետևյալը. «Չընդունելով մեղավորներին կյանքից զրկելու սովորույթը, ես նախապատվությունը տվել եմ նրանց բանտարկելուն՝ դրա հետ միասին արձագանքելով նրանց տանջալից կանչերին: Իսկ ահա, ինչպես լսելի է, դու ազատել, դուրս ես թողել նրանց, որոնց արարքները ավելի վատն են, քան դիվական մեղքերը: Նման բան անելով դու Եզդանի (Արամազդի –Ս. Խ.) առջև մեղք ես գործել **գործով, խոսքով և վատ դատելով**: Եթե թագավորում ես, ապա բանականություն պետք է ցուցաբերես, իսկ եթե չգիտես՝ իմացողների՛ն կանչիր: **Չպետք է թողություն տրվի չարիք բերողին, եթե նա նույնիսկ գանձաբեր լինի:** Ով չարիք է գործել, ապա, ըստ սովորության, նմանի նկատմամբ **օգտակարը կապանքն է**: Այնուհետև դու **խոսք ես ասել հարկերի (զիջման) մասին՝** թույլ տալով քեզ անխոհեմաբար ցանցի մեջ գցել: Ես միայն նրանցից եմ մեծ հարկեր հավաքել և տուրքեր բռնագանձել, ում մոտ դրանք վճարելու հնարավորություն եմ տեսել: Իսկ եթե որևէ մեկը դրա համար ինձ անգոսնել է, ապա նա թշնամի է, Ահրիմանի ծնունդ»[1]:

Ֆիրդոուսիի այս վկայությամբ ևս հաստատվում է համաներման հրամանագրի ու դրա արդյունքների մասին Մ. Կաղանկատվացու հայտնած տեղեկությունների ճշտությունը: Նրանց հաղորդումները տրամաբանորեն լրացնում

[1] Фирдоуси, Шахнаме, հատ. 6, էջ 510-511:

են միմյանց: Սակայն վերջինս չգիտի, որ Կոբադ Շիրոյե թագավորը, ավագանու պահանջով ազատելով բոլոր բանտարկյալներին, այդ թվում նաև իր 15 կամ 16 եղբայրներին, վերջիններիս նախապես խեղանդամել է: Իսկ ահա Կաղանկատվացին, չիմանալով եղբայրների թվաքանակի մասին, հայտնում է, որ նա այդ գործողությունը (անհատական բնույթ ունեցող իրավական ակտով) կատարել է՝ բարի լինելու և այդ կերպ նրանց փրկելու նպատակով: Նրա այդ տեղեկությունը կարող է անիմաստ թվալ, սակայն դա ճշմարիտ է: Բանն այն է, որ, ըստ Ավեստայի, խեղանդամները, կույրերը, խուլերը և այլք, իրավունք չունեին մոտենալ սրբատեղիների, ինչպես նաև իշխել և թագավորել[1]: Եվ նա, իր եղբայրներին զրկելով թագավորելու հնարավորությունից, փորձել է այդ կերպ նրանց կյանքը պահպանել: Սակայն «շատերի ամբաստանության հետևանքով» (ատյանի պահանջով – Ս. Խ.) նա ստիպված է եղել նրանց նույնպես դատապարտել մահվան, ինչպես գահընկեց արված հորը: Պետք է նշել նաև, որ Ֆիրդոուսին թեև հայտնում է, որ Կոբադ Շիրոյեն իր համաներման մասին հրամանագրով հայտարարել է նաև **հարկային ամնիստիա, բայց չգիտի, թե քանի տարով**: Իսկ Կաղանկատվացին հայտնում է, որ, այն եղել է **երեք տարով,** որը նույնպես ճիշտ է:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ Իրանի թագավոր Կավատ կամ Կոբադ Շիրոյեն, ատյանի համաձայնությամբ և պահանջով, ընդունած է եղել համընդհանրական բնույթի համաներման ակտ, որով բոլոր այն անձինք, որոնք բանտարկված են եղել Խոսրով-Փարվեզ Երկրորդ թագավորի կողմից, ազատվել են բանտերից: Ընդ որում բանտարկյալներն ազատվել են ոչ միայն մայրաքաղաքի բանտերից, ինչպես գրում է Ֆիրդոուսին, այլ ամբողջ պետության, այդ թվում նշանավոր Անհուշ բերդից, որի մասին հատկապես հիշատակում է Մ. Կաղանկատվացին: Բացի դրանից՝ **Կոբադ Շիրոյեն այդ համաներման հրամանագրով հայտարարել է նաև հարկային համաներում՝ երեք տարով տնտեսվարողներին ազատելով հարկերից ու տուրքերից**: Այդ ֆենոմենալ փաստը ևս ֆանտազիայի արդյունք չէ: Դա հնարավոր է եղել անել, քանզի պետական գանձարանը լի է եղել նախկին թագավորի հավաքած «անհաշիվ» հարստությամբ, որը, ըստ Ֆիրդոուսիի, հավաքված է եղել ոչ միայն օրենքով, այլև բռնությամբ և ոչ թե այն դրդապատճառներով, որոնցով ղեկավարվել էր հայոց Տրդատ Մեծ թագավորը՝ հարկային ամնիստիա հայտարարելով, թեև այս բոլոր հարցերում պարսիկ թագավորը ակնհայտորեն հետևել է նրա օրինակին:

---

[1] Авеста в русских переводах (1861-1996). Сост., общ. ред., примеч. и справоч. раздел И. В. Рака, СПб., 1998, с. 80, 83.

Ֆիրդոուսիի երկում շեշտված է նաև Խոսրով-Կավատ Փարվեզ Երկրորդի այն կարծիքը, ըստ որի հանցագործները (և պոտենցիալ հանցագործները) պետք է պահվեն բանտում: Հնարավորության դեպքում, ասում է նա, նմանների կյանքը պետք է պահպանվի, բայց նրանք որևէ համաներման ակտով չպետք է մասսայաբար ազատվեն բանտից: **Քանզի, ասում է նա, օրենքով նման բան անել արգելված է և վտանգավոր պետության համար:** Բացի դրանից՝ նա օրենքով արգելված և ոչ խելամիտ է համարում **նաև հարկային համաներում հայտարարելը**: Եվ դա անկախ այն հանգամանքից, թե ինչքան հարստություն կա արքայական գանձատանը: Իսկ դրանք հավաքվել են ոչ թե ագահության դրդումներով, ինչի մեջ իրեն մեղադրում են, այլ անհրաժեշտաբար: Պետությանը միշտ դրամական միջոցներ են պետք, և դրանք երբեք ավելորդ չեն լինում: Նա հայտնում է նաև, որ ինքը իր որդիներին և այլոց (օրինակ՝ Վիրոյին) բանտարկել է ոչ թե նրանց տանջանքներ ու զրկանքներ պատճառելու նպատակով, այլ պատվավոր կերպով նրանց մեկուսացրել է գայթակղություններից, դրանց թվում՝ հեղաշրջումներ և ապստամբություններ կատարելու հնարավորությունից: Նրա խոսքերից ակնհայտ է դառնում, որ զրադաշտական իրավունքում համաներման ինստիտուտ նախատեսված չի եղել: Իսկ դա նշանակում է, որ համաներումը զուտ հայկական-քրիստոնեական իրավունքի ֆենոմեն է՝ ներդրված հայկական քրիստոնեական իրավական սիստեմում մ.թ. 4-րդ դարի սկզբին Տրդատ Երրորդ Մեծ թագավորի և Գրիգոր Լուսավորչի կողմից: Եվ Իրանում դրա այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են Վաղարշ Առաջինի և Կոբադ-Շիրոյեի վերոնշված համաներման ակտերը, հրապարակվել են հայկական նշված ակտի օրինակով, դրա հետևանքն ու նմանակումն են:

Վերոշարադրվածից պարզվում է, որ Կոբադ Շիրոյե թագավորի հրապարակած համաներման հրամանագիրը թեև քաղաքակրթական նշանակություն չունի, բայց նույնպես ֆենոմենալ, համընդհանրական իրավական, քաղաքական և տնտեսական բնույթ ունեցող և կատարյալ նորմատիվ-իրավական ակտ է, որի մեջ երևան է գալիս արժեքավորություն: Դրա պարունակած նորմն ունի հիպոթեզ, դիսպոզիցիա և սանկցիա: Դրա **հիպոթեզ-պայման** («քանի որ կամ եթե») կարելի է համարել Խոսրով-Կոբատ Փարվեզ Երկրորդ թագավորի ոչ ճիշտ և ոչ իրավական վարքագիծը գահաժառանգ ընտրելիս, ժառանգներին և այլ նշանավոր անձանց բանտային պայմաններում անժամկետ, առանց դատարանի դատավճռի ազատազրկման մեջ պահելը, ինչպես նաև նրա վարած հարկային խիստ քաղաքականությունը՝ կատարված ագահաբար, բռնագրավման եղանակներով և հակառակ օրենքների ոգուն: Հիպոթեզը բարդ է, և դրա մեջ է մտնում նաև ազատվածների կողմից նոր թագավորին հավատարիմ մնալու, ինչպես նաև սուր

չկրելու, այն է՝ թագավորին երբեք չդիմադրելու պայմանը: Դրա մասն է կազմում նաև հարկերը 3 տարով զիջելու պայմանը:

Համաներման նորմի **դիսպոզիցիան** է բանտերում գտնվող բոլոր կալանավորներին ազատություն շնորհելու և բանտերից նրանց դուրս թողնելու, իրենց բնակության վայրեր հետ դարձնելու (ինչպես Վիրոյին), նրանց իրավունքները վերականգնելու, ինչպես նաև **բոլորի կողմից ցնծալու և թագավորին օրհնելու, նրան որպես թագավոր ընդունելու և ենթարկվելու պարտականությունը**: Դրա մեջ է մտնում նաև հարկերի զիջումը երեք տարի ժամանակով և այդ կապակցությամբ սահմանված իրավունքների ու պարտակա-նությունների շրջանակը:

Համաներման նորմի **սանկցիան** նախատեսում է բոլոր պետական պաշտոնյաների կողմից հրամանագրի ճիշտ և անշեղ կատարում, իսկ դրա չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում սահմանվում է մահապատիժ: Այն ունի երկընտրանքային բնույթ և պարունակում է նաև խրախուսանք՝ հարկերի զիջում երեք տարով:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն, Երևան, 1983:
2. **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1981:
3. **Եղիշե**, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1989:
4. **Փավստոս Բուզանդ,** Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1987: **Ղազար Փարպեցի,** Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ. հրատ., 1982:
5. **Մովսես Կաղանկատվացի,** Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, «Հայաստան», 1969,
6. **Հովհ. Մամիկոնյան,** Պատմութիւն Տարօնոյ, կազմեց և հրատ. պատրաստեց պրոֆ. Ա. Աբրահամյան, Երևան, 1941:
7. **Հովհ. Մամիկոնյան, Տարոնի պատմություն,** աշխատասիրությամբ՝ Վ. Հ. Վարդանյանի, խմբ.՝ Ա.Ս. Սահակյանի, Երևան, «Խորհրդային գրող», 1989:
8. **Զենոբ Գլակ Ասորի,** Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1832:
9. **Զենոբ Գլակ,** Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1889:
10. **Վարդանյան Վ. Մ.,** Գրիգոր Լուսավորչի ձեռնադրության, հայոց ամբողջական դարձի հանգամանքների շուրջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2001, № 1, էջ 41-60:

11. **Հակոբյան Հ. Հ., Հակոբյան Ռ. Խ.,** Մարդասիրությունը որպես իրավունքի ընդհանուր սկզբունք, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, № 4, 2017, էջ 19-28:
12. Հաճախապատում ճառք,Մատենագիրք հայոց, Ա հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 128-137:
13. [1]Թուղթ սիրոյ և միաբանութեան մեծի կայսերն Կոստանդիանոսի և սուրբ պապին Սեղբեստրոսի և Տրդատայ թագաւորին, և սրբոյն Գրիգորի, **Ագաթանգեղոս,** յորում պարունակի պատմութիւն Տրդատայ արքայի և սրբոյն Գրիգորի և ևս աստուածախոս վարդապետութեան նորին սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ, Յորթագիւղ, ի տպարանի Պողոսի Արապեան, 1922, էջ 331-363:
14. **Շահնազարյան Կ.,** Դաշանց թղթոյ քննութիւնն ու հերքումը, Փարիզ, 1862:
15. **Խաչատրյան Ս. Ա.,** Կապելը որպես խափանման միջոց, քննության մեթոդ և պատժատեսակ՝ ըստ զրադաշտական և հին հայկական քրիստոնեական իրավունքի, «Արդարադատություն» գիտական հանդես, 2017, № 4, էջ 21-26: Շարունակությունը՝ նույն գիտական հանդեսում, 2017, № 5, էջ 9-15:
16. Հայ ժողովրդի պատմություն, ութ հատորից, հ. 2, ՀՀ ԳԱ հրատ., Երևան, 1971:
17. **Ժամկոչյան Հ.**, **Աբրահամյան Ա., Մելիք-Բախշյան Ստ. Ս.,** Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, 1963:
18. **Ժամկոչյան Հ.Գ.**, **Աբրահամյան Ա.Գ., Մելիք-Բախշյան Ստ., Պողոսյան Ս.,** Հայ ժողովրդի պատմություն, (սկզբից մինչև 18-րդ դարի վերջը), Երևան, 1975:
19. Հայոց պատմություն, խմբ. Հր. Ռ. Սիմոնյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 35-36:
20. **Միրիջանյան Լ.,** Պատմության և առասպելի սահմանները, Երևան, «Լույս», 1986:
21. **Հակոբյան Մ.,** Հայկազունիներ (մոռացված մի արքայատոհմ), Երևան, 2012, Երևան, «Գիտություն», 2013:
22. **Խաչատրյան Ս. Ա.,** «Երեք չափերի» սկզբունքները «Հաճախապատում ճառք» -ում, ՊԲՀ, 2013, № 2, էջ 234-254:
23. **Խաչատրյան Ս. Ա.,** «Հաճախապատում ճառքի» հեղինակության հարցի շուրջ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, № 14, 2012, էջ 567-579:
24. **Խաչատրյան Ս. Ա.,** «Հաճախապատում ճառքի» հեղինակության և հայկական այբուբենի ստեղծման հարցերի շուրջ, Երևան, «Գիտություն», 2019:

25. **Խաչատրյան Ս. Ա.,** «Հաճախապատում ճառքի» հեղինակության և հայկական այբուբենի ստեղծման հարցերի շուրջ, երկրորդ հրատ., Երևան, «Լուսաբաց», 2020:
26. **Խաչատրյան Ս. Ա.,** Հռիփսիմյան կույսերի՝ Հռոմից փախուստի դիմելու և Հայաստան գալու հարցի շուրջ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 2021, № 10, էջ 462-486:
27. **Խաչատրյան Ս. Ա.,** Հռիփսիմե կույսի և Տրդատ Երրորդ թագավորի ամուսնության հարցի շուրջ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 2021, № 11, էջ 456-485:
28. **Խաչատրյան Ս. Ա.,** Հայոց իրավունքի ու պետության ծագման պատճառների ու միջոցի մասին, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2022, № 13, էջ 526-560:
29. **Հակոբյան Մ.,** Հայկազունիներ (մոռացված մի արքայատոհմ), Երևան, հեղինակային հրատարակություն, 2012, Հայկազունիներ, խմբ. **Վ. Բարխուդարյան, Հ. Հակոբյան, Ա. Քոսյան և ուրիշներ, Երևան**, «Գիտություն», 2013:
30. Страбон, География в 17 книгах, М., Наука, 1964, с. 487.
31. Моммзен Теодор, История Рима, Ростов на Дону, Феникс, т. 4, 1997.
32. Евсевий Кесарийский, Жизнь Константина. Перевод СПб Духовной Академии, пересмотрен и исправлен Серповой В. В., Примечания Л. М. Калинина. М., «Labarum», 1998 (ինտեռնետային տարբերակ):
33. Евсевий Кесарийский, Церковная история, СПб., изд. Олега Обышко, 2013.
34. Валерий Максим, Девять книг достопамятных деяний и высказываний, Пер. с латинского, комментарий, вступительная статья А.М. Сморчкова, М., 2020.
35. Аппиан Александрийский, Римская история, М., Наука, 1998.
36. Аммиан Марцеллин, Римская история, М., Ладомир, 2005.
37. Фирдоуси, Шахнаме, Серия Литературные памятники, М., изд. АН СССР, т. 6. 1989.
38. Люблинский П., Право амнистии: историко-догматическое и политическое исследование, СПб., 1907.
39. Самохин В. А., История развития институтов амнистии и помилования // Научно-образовательный журнал для студентов и преподавателей «StudNet», 2021.
40. Гришко А. Я., Потапов А. М., Амнистия. Помилование. Судимость, М., Логос, 2009.

41. Левашова О. В., Амнистия и помилование как поощрительые нормы уголовного права России // Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Тамбов, 2007.
42. Додонов В. Н., Сравнительное уголовное право. М., «Юрлитинформ», 2009.
43. Тюренкова К. А., Право убежища как международно-правовой институт // Журнал Астраханского государственного университета «Гуманитарные исследования», 2017, № 1 (61), с. 116-121.
44. Риккерт Г., Науки о природе и науки о культуре, М., 1998.
45. Виндельбанд В., Прелюдии, СПБ, 1904.
46. Нерсесянц В. С., Общая теория права и государства, М., 1999.
47. Алексеев **С.,** Право: Опыт комплексного исследовании, М., 1999.
48. Теория государства и права / Под ред. Корельского В. и Перевалова В. М., 1997.
49. Уголоное право. Общая часть: учебник. Отв. ред. И. Я. Козаченко, 4-е изд., перераб. и доп. М., 2008.
50. Общая теория государства и права. Академический курс в 2-х томах, М., 1998, с. 221-226.
51. Авеста в русских переводах (1861-1996). Сост., общ. ред., примеч. и справоч. раздел И. В. Рака. СПб., 1998.

THE ISSUE OF AMNESTY IN ARMENIAN HISTORY

KHACHATRYAN SAMVEL
PhD in Law, Associate Professor,
GSU Lecturer
email: khachatryan08@mail.ru

The first act of amnesty of universal, religious-legal, political, economic and civilizational character was adopted by the king of Greater Armenia Tiridates III in 298-301 on the advice of Gregory the Illuminator. Based on this act, all debtors and offenders subject to criminal liability were released en masse. The sentences of especially dangerous offenders who were serving time in prisons were also alleviated. They were freed from their bonds. The Christian Church and the monasteries were exempted from taxes, and nuns were freed from the obligation of forced marriage and childbearing. A general tax amnesty was also declared.

Following the example of the Armenian king, Roman Emperor Constantine the Great announced similar amnesty on the day of celebration of the 20th anniversary of coming to power in 326. He, too, exempted the Christian Church and the monasteries from taxes, and freed the nuns from the obligation of forced marriage and childbearing, and the residents of Armenian provinces of the Roman Empire were exempted from the poll tax.

There were acts of amnesty in Zoroastrian history as well, which had an exclusive and universal character, such as, for example, the amnesty decree of King Vagharsh I adopted in 485. The decree banned the mention of the deeds by the Armenian soldiers, ministers (nakharars) and princes, as well as by the population committed against the Persian state during the uprising in 481-484. Their deeds were declared to have been committed in a state of necessary defense or extreme necessity, and the perpetrators, without exception, were released from criminal liability. Taxes were reduced, and the churches and the monasteries were completely exempted from taxes.

Another act of amnesty of exceptional, universal and economic character in Zoroastrian history was adopted by King Kavad Shiruya in 628, based on which all prisoners, without exception, were released from prisons, and all traders were exempted from taxes and duties for three years.

Thus, in the article the author proves that all the above mentioned acts of amnesty in non-Armenian states were adopted following the example of the first act of

amnesty of universal, nationwide and civilizational character adopted by Tiridates III the Great.

Keywords: *Act of amnesty, general act of amnesty, 30 tyrants, Tiridates III, Gregory the Illuminator, Constantine the Great, Vahan Mamikonyan, Vagharsh I, Khosrow Kavad Parviz II, Kavad Shiruya.*

ПРОБЛЕМА АМНИСТИИ В АРМЯНСКОЙ ИСТОРИИ

ХАЧАТРЯН САМВЕЛ
Кандидат юридических наук, доцент
Профессор ГГУ
электронная почта: khachatryan08@mail.ru

Первый акт амнистии всеобщего, религиозно-правового, политического, экономического и цивилизационного характера был принят царем Великой Армении Тиридатом Третьим по совету Григория Просветителя в 298-301 гг. На основании этого акта массовым образом были освобождены все должники и преступники, подлежащие уголовной ответственности. Также была облегчена участь особо опасных преступников, которые отбывали наказание в тюрьмах. Они были освобождены от оков. Христианская церковь и монастыри были освобождены от налогов, а монахини – от обязанности вынужденного замужества и деторождения. Также была объявлена всеобщая налоговая амнистия.

По примеру армянского царя подобную амнистию объявил в день празднования
двадцатилетия своего прихода ко власти в 326 г. римский император Константин Великий. Он также освободил христианскую церковь и монастыри от налогов, а монахинь – от обязанности вынужденного замужества и деторождения, а жители армянских провинций Римской империи были освобождены от подушного налога.

В зороастрийской действительности тоже имели место акты амнистий, имеющих исключительный и всеобщий характер. Таким, например, является указ об амнистии царя Валарша Первого, принятый в 485 г. Этим указом было запрещено упоминание о деяниях армянских солдат, нахараров и князей, а также населения, совершенных против персидского государства во время восстания в 481-484 гг. Их деяния были объявлены совершенными в состоянии необходимой обороны или крайней необходимости, а исполнители, все без исключения, были

освобождены от уголовной ответственности. Налоги были ослаблены, а церковь и монастыри полностью освобождены от налогов.

Еще один акт амнистии в зороастрийской действительности, имеющий исключительный, всеобщий, а также экономический характер, был принят царем Ирана Кавадом Шируйе, в 628 г. На его основании все, без исключения заключенные, были освобождены из тюрем, а все хозяйственники были освобождены от налогов и податей на три года.

Итак, автором доказано, что все вышеуказанные акты об амнистии в неармянских государствах были приняты по примеру первого акта об амнистии, имеющего всеобщий, общенациональный и цивилизационный характер, принятого Тиридатом Третьим Великим.

Ключевые слова: *Акт амнистии, всеобщий акт амнистии, 30 тиранов, Тиридат Третий, Григорий Просветитель, Константин Великий, Ваган Мамиконян, Валарш Первый, Хосров Кавад Парвез Второй, Кавад Шируйе.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 29.11.2024թ.:
Հոդվածը գրախոսվել է 19.12.2024թ.:
Ընդունվել է տպագրության 25.04.2025թ.: